

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ



«ՀՄԿԱ» ՓԲԸ

փակ բաժնետիրական ընկերություն

թողարկողի անվանումը և կազմակերպչաիրավական ձևը

0042, ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան փ. 31, բն. 12

Հեռ՝ (+374) 33 51 05 10, 33 51 05 11

Էլ.-փոստ՝ info@hska.am

Կայք՝ www.hska.am

«Արմբրոկ»

բաց բաժնետիրական ընկերություն

գլխավոր տեղաբաշխողի անվանումը և կազմակերպչաիրավական ձևը

ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 39

Հեռ՝ +374 11 590000

Էլ.-փոստ՝ armbrok@armbrok.am

Կայք՝ https://www.armbrok.am

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍ
ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ**

Արժեթղթերի տեսակը՝ Արժեթղթերի ձևը՝ Արժեթղթերի քանակը՝ Արժեթղթերի անվանական արժեքը	անվանական, արժեկտրոնային պարտատոմս ոչ փաստաթղթային համապատասխան թողարկման ծավալի ու անվանական արժեքի 100 (հարյուր) ԱՄՆ դոլար կամ 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ծավալը	Դրամային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ Դոլարային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնը՝	ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Շրջանառության ժամկետը՝	ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ








ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	4
ՄԱՍ 1. ԱՍՓՈՓԱԹԵՐԹ	6
1.1. Տեղեկատվություն թողարկողի և թողարկողի գործունեության վերաբերյալ	6
1.2. Թողարկողին և թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր	9
1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	11
1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ	12
1.5. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը	13
1.6. Թողարկվող պարտատոմսերի հիմնական վիճակագրական տվյալները	14
1.7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը	14
1.8. Վերջնական պայմանների հրապարակման ձևը	15
1.9. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները	15
ՄԱՍ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	19
2.1. Ռիսկային գործոններ	19
2.2. Հիմնական տեղեկատվություն	20
2.3. Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ	20
2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները	28
2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	35
2.6. Լրացուցիչ տեղեկատվություն	36
ՄԱՍ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	37
3.1. Անկախ աուդիտորները	37
3.2. Ռիսկային գործոններ	37
3.3. Տեղեկատվություն թողարկողի մասին	40
3.4. Բիզնեսի նկարագիրը	42
3.5. Թողարկողի կառուցվածքը	43
3.6. Թողարկողի հիմնական միջոցները	44
3.7. Չարգացման վերջին միտումները	45

3.8. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները.....	45
3.9. Կառավարման մարմինների գործունեությունը.....	50
3.10. Հսկող անձինք	50
3.11. Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	50
3.12. Լրացուցիչ տեղեկատվություն	51
3.13. Էական պայմանագրեր	52
3.14. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 52	
3.15. Այլ տեղեկատվություն.....	52
ՄԱՍ 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	53
4.1. ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև/ իրավաբանական անձ/	53
4.2. ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/	56
4.3. ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը 59	
4.4. ՀԱՎԵԼՎԱԾ 4: Թողարկման պայմաններ	60
4.5. ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկողի 2022, 2023, և 2024 թթ–ի ֆինանսական հաշվետվություններ և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը 66	

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Սարգիս Իսրաելյան (անուն, ազգանուն)	Բաժնետեր, Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	04.07.2025 (ամսաթիվ)
Դավիթ Մարգարյան (անուն, ազգանուն)	Բաժնետեր, Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	04.07.2025 (ամսաթիվ)
Սամվել Մարգարյան (անուն, ազգանուն)	Բաժնետեր, Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	04.07.2025 (ամսաթիվ)
Դավիթ Քոչարյան (անուն, ազգանուն)	Բաժնետեր, Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	04.07.2025 (ամսաթիվ)
Խաչիկ Սահակյան (անուն, ազգանուն)	Բաժնետեր, Խորհրդի անդամ (պաշտոն)	 (ստորագրություն)	04.07.2025 (ամսաթիվ)
Ղևոնդ Աբրահամյան (անուն, ազգանուն)	Տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	04.07.2025 (ամսաթիվ)
Հարություն Մայիլյան (անուն, ազգանուն)	Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն)	04.07.2025 (ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են՝

Ղևոնդ Աբրահամյան (անուն, ազգանուն)	Տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	04.07.2025 (ամսաթիվ)
---------------------------------------	--------------------	--	-------------------------

Տեղաբաշխող՝ «ԱՐՄԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերություն

Արամ Կալֆաջյան	Տնօրեն		04.07.2025
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՄԱՍ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես «ՀՄԿԱ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ **Թողարկող** կամ **Կազմակերպություն** կամ **Ընկերություն**) պարտատոմսերի ազդագրի (այսուհետ՝ **Ազդագիր**) ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա: Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում: Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Թողարկողի և/կամ «ԱՐՄԲՐՈՎ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ **Տեղաբաշխող**) գլխամասային գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքերում՝ www.hska.am, www.armbrok.com:

2022-2024 թվականների դրությամբ ներկայացված բոլոր ֆինանսական տվյալների աղբյուրը Թողարկողի տարեկան ֆինանսական հաշվետվություններն են, իսկ մնացած տվյալների ներկայացման աղբյուրն է Կազմակերպության ներքին տեղեկատվական համակարգը, ինչպես նաև պետական մարմինների և այլ կազմակերպությունների կողմից պաշտոնապես հրապարակված տեղեկատվությունը:

1.1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

1.1.1. Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՀՄԿԱ» փակ բաժնետիրական ընկերություն,

ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “ГСКА”,

անգլերեն՝ HSKA Closed Joint Stock Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՀՄԿԱ» ՓԲԸ,

ռուսերեն՝ ЗАО “ГСКА”,

անգլերեն՝ HSKA CJSC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

0042, ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան փ. 31, բն. 12

Թողարկողի պետական գրանցման համարն է՝

271.120.1236387

Թողարկողի գործունեության վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Հաղթանակ թաղամաս 1-ին փ. 100/1 տարածք,

Կապի միջոցները՝

Հեռ.՝ (+374 33) 51 05 10, 51 05 11,

Էլ. փոստ՝ info@hska.am,

Կայք՝ www.hska.am

Թողարկողին առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է դիմել «ՀՄԿԱ» ՓԲԸ-ի տնօրեն Ղևոնդ Գրիգորի Աբրահամյան կապի հետևյալ միջոցներով. հեռ.՝ (+374 33) 51 05 10, 51 05 11, Էլ. հասցե՝ info@hska.am:

1.1.2. Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«ՀՄԿԱ» ՓԲԸ-ն գրանցվել է 2022 թ.-ի մայիսի 10-ին, Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում: Ներկայումս կազմակերպությունն ունի 1 գրասենյակ Երևանում:

Կազմակերպությունը զբաղվում է բետոնային խառնուրդի արտադրությամբ և շինարարական տեխնիկայի տրամադրմամբ՝ սպասարկելով մեծածավալ քաղաքաշինական նախագծեր:

Այն հիմնադրվել է բետոնային արտադրանքի և շինարարական լոգիստիկայի ոլորտում բազմամյա փորձ ունեցող մասնագետների կողմից: Չնայած հիմնադրման պահից անցած համեմատաբար կարճ ժամանակահատվածի, Ընկերությունը 2023 թվականի արդյունքներով արձանագրել է առաջին շահույթը՝ ապացուցելով իր բիզնես մոդելի կենսունակությունն ու մրցունակությունը շուկայում:

Կազմակերպության տեսլականն է դառնալ իներտ շինանյութերի արտադրության և շինարարական տեխնիկայի վարձակալության ոլորտի առաջատար ապահովելով բարձրակարգ արտադրանք և հուսալի ծառայություններ՝ հիմք ընդունելով տեխնոլոգիական արդիականացումը, գործառնությունների արդյունավետությունը և երկարաժամկետ համագործակցությունը:

1.1.3. Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 1,781,624,700 (մեկ միլիարդ յոթ հարյուր ութսունմեկ միլիոն վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ առ 31.12.2024թ., և անփոփոխ է սույն Ազդագրի կազմման և ներկայացման պահին: Կանոնադրական կապիտալը բաժանված է 43,100 (քառասուներեք հազար հարյուր) սովորական բաժնետոմսերի, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 41,337 (քառասունմեկ հազար երեք հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ:

1.1.4. Թողարկողի բիզնեսի նկարագիրը

«ՀՄԿԱ» ՓԲԸ-ն մասնագիտացած է բետոնի արտադրության, իներտ նյութերի մատակարարման և շինարարական տեխնիկայի վարձակալության ծառայությունների ոլորտում:

Ընկերության հիմնական արտադրական բազան գտնվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում, որտեղ շահագործվում է LIEBHERR LCM 3.0 բետոնի արդի արտադրական գործարանը: «ՀՄԿԱ»-ն միակն է Հայաստանում, ով շուկայում առաջարկում է M750/B55 բետոն, ինչը հնարավորություն է տալիս ներգրավվել խոշոր ենթակառուցվածքային և արդյունաբերական նախագծերում: Ընկերության կողմից արտադրվող բետոնի տեսակներն են՝ M100/B7.5, M150/B12.5, M200/B15, M250/B20, M300/B22.5, M350/B25, M400/B30, M450/B35, M550/B45, M650/B50 և M750/B55:

Բետոնի արտադրությունից զատ, ընկերությունը տրամադրում է շինարարական տեխնիկայի վարձակալության համալիր ծառայություններ, որոնք ներառում են բետոնախառնիչներ, բետոնապոմպեր, ինքնաթափ բեռնատարներ, ճակատային բեռնիչներ, քարշակներ և այլ մեքենատեխնիկա: «ՀՄԿԱ»-ն ակտիվորեն համագործակցում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի կառուցապատող ընկերությունների հետ:


2025-2026 թվականների համար նախատեսված ներդրումային ծրագրերը ներառում են նոր արտադրական ուղղությունների ներդրում՝ մասնավորապես ավազի և բազալտի խճի արտադրություն, ինչպես նաև բարձր արժեք ունեցող շինանյութերի ներմուծում և իրացում:

Ներդրումային առաջին փուլում նախատեսվում է ներդնել շուրջ 1.5 մլրդ ՀՀ դրամ, ինչի արդյունքում ընկերությունը կկարողանա ապահովել լայնածավալ և տեխնիկապես բարդ նախագծերի ամբողջական սպասարկում: Բացի այդ, նախատեսվում է շարունակաբար ընդլայնել տեխնիկայի պարկը և ներդնել ավտոմատացման ու էներգախնայողության նորագույն լուծումներ:

«ՀՄԿԱ» ՓԲԸ-ն առաջնորդվում է որակի, ճշգրտության և տեխնոլոգիական արդիականության սկզբունքներով: Ընկերությունը ունի բարձր պատրաստվածությամբ անձնակազմ և կայուն, հավատարիմ հաճախորդների բազա: Նպատակն է դառնալ Հայաստանի շինարարության ոլորտում առաջատար մատակարարը՝ բետոնե լուծումների և շինտեխնիկայի վարձակալության ծառայությունների շուկայում:

1.1.5. Թողարկողի կազմակերպական կառուցվածքը

Կազմակերպության կառուցվածքը ներկայացված է ստորև.



1.1.6. Ակտիվների որակը

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը, համաձայն աուդիտ անցած հաշվետվությունների, կազմել է 1,683.8 մլն ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ Կապիտալի համարժեքության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 22.0%: Ակտիվների 82% կազմել են արտադրական հիմնական միջոցները: 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը, համաձայն աուդիտ անցած հաշվետվությունների, կազմել է 3,107.3 մլն ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ Կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 31.2%: Ակտիվների 83% կազմել են արտադրական հիմնական միջոցները: Իսկ նույն ցուցանիշները 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, համաձայն աուդիտ անցած

հաշվետվությունների, կազմել են 3,975.6 մլն ՀՀ դրամ և 44.5% համապատասխանաբար: Ակտիվների 76% կազմել են արտադրական հիմնական միջոցները: Արտադրական գույքը գեր ժամանակակից է և լիովին նոր է՝ 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ արտադրական հիմնական միջոցների միջին տարիքը կազմում է 1.2 տարի:

1.2. Թողարկողին և Թողարկողի պարտատոմսերին առնչվող ռիսկեր

1.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերում ներդրում կատարելու մասին ցանկացած որոշման պետք է նախորդի դրա հետ կապված ռիսկերի վերլուծությունը: Այս առումով անհրաժեշտ է հստակ տարանջատում մտցնել Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի միջև: Թողարկողի հետ կապված ռիսկերը պայմանավորված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հետ և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Մեր պարագայում, Թողարկողին առնչվող հիմնական ռիսկերը ներկայացված են ստորև:

Մակրոտնտեսական ռիսկեր՝ կապված են երկրի և տարածաշրջանի մակրոտնտեսական ու աշխարհաքաղաքական իրավիճակի հնարավոր վատթարացման հետ, ինչի արդյունքում կարող է նվազել շինարարության ծավալը, ներդրումների հոսքը և կառուցապատման ոլորտի ակտիվությունը: Այս գործոնները կարող են հանգեցնել բետոնի և իներտ նյութերի պահանջարկի նվազման, ինչպես նաև վարձույթային ծառայությունների օգտագործման կրճատման՝ ազդելով Կազմակերպության եկամուտների, շահութաբերության ու կանխիկ հոսքերի վրա:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը պայմանավորված է օրենսդրական այնպիսի փոփոխություններով, որոնք կարող են անդրադառնալ ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շինարարական ոլորտում տիրող իրավիճակի վրա: Մասնավորապես, արդեն սկսվել է ՀՀ Հարկային օրենսգրքի՝ եկամտային հարկից հիփոթեքային վարկերի սպասարկման տոկոսագումարների վերադարձի դրույթի աստիճանական չեղարկումը տարբեր տարածաշրջանների համար, ինչը կարող է հանգեցնել բնակարանային պահանջարկի կրճատման՝ անուղղակիորեն նվազեցնելով շինարարության ծավալը, և համապատասխանաբար՝ բետոնի և շինտեխնիկայի պահանջարկը:

Մրցակցային ռիսկը: Շինանյութերի և շինարարական տեխնիկայի շուկան բավականին մրցակցային է՝ պայմանավորված մի շարք տեղական և ներմուծող ընկերությունների ակտիվությամբ: Շուկայի մասնակիցների կողմից առաջարկվող ավելի ցածր գներով կամ նորարարական ծառայություններով արտահայտվող մրցակցությունը կարող է ազդել Կազմակերպության վաճառքների ծավալների, շահույթի մարժայի և շուկայում դիրքի վրա:

Վարկային ռիսկ/դեֆոլտի ռիսկ: Այն առնչվում է Կազմակերպության կողմից իր վարկային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելուն կամ չկատարելուն:

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է Կազմակերպության ազատ դրամական միջոցների անբավարարությամբ, ինչը կարող է վտանգել ընթացիկ պարտավորությունների պատշաճ և ժամանակին կատարումը: Այս տիպի ռիսկի հիմնական աղբյուրներն են մակրոտնտեսական վիճակի վատթարացումը, բետոնի պահանջարկի անկումը, շինարարական ակտիվության նվազումը, ինչպես նաև դեբիտորական պարտքերի ուշացման կամ չհավաքագրման հավանականությունը:

Տոկոսադրույքի ռիսկը կապված է շուկայում տոկոսադրույքների ընդհանուր մակարդակի անսպասելի և կտրուկ փոփոխությունների հետ, որոնք կարող են անդրադառնալ ֆինանսական գործիքների գների և եկամտաբերության վրա: Շուկայական տոկոսադրույքների

փոփոխությունը կարող է զգալի բացասական ազդեցություն թողնել Կազմակերպության ինչպես տոկոսային եկամուտների, այնպես էլ տոկոսային ծախսերի վրա՝ հանգեցնելով ֆինանսական ցուցանիշների վատթարացման ու շահույթի կրճատման:

Արտարժույթային ռիսկ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կազմակերպությունը արտադրական գործընթացում լայնորեն օգտագործում է ներմուծվող հումք և տեխնիկա, արտարժույթի փոխարժեքի տատանումները կարող են զգալիորեն ազդել դրանց ձեռքբերման արժեքի վրա՝ մեծացնելով արտադրական ծախսերը և ճնշում գործադրելով Կազմակերպության շահութաբերության վրա: Արտարժույթային տատանումներն ազդեցություն կարող են ունենալ նաև Կազմակերպության վարկային պարտավորությունների վրա, եթե դրանք մատուցվում են արտարժույթով:

Գործառնական ռիսկեր: Կազմակերպության բնականոն գործունեությունը կարող է խաթարվել հումքի մատակարարումների ուշացման, սարքավորումների անսարքության կամ դրանց անբավարարության, ինչպես նաև արտադրական գործընթացներում հնարավոր խափանումների հետևանքով: Նման դեպքերը կարող են հանգեցնել պայմանագրերի ժամկետների խախտման, տույժերի կիրառման կամ լրացուցիչ ծախսերի: Բացի այդ, բարձր աշխատուժի հոսունությունը կարող է հանգեցնել փորձառու մասնագետների կորստի՝ ազդելով արտադրողականության և ծառայությունների որակի վրա:

1.2.2. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի պարտատոմսերում ներդրումները ենթադրում են որոշակի ռիսկեր: Ուստի, նախքան պարտատոմսերի գնման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը, ներդրողը պետք է մանրակրկիտ դիտարկի և համադրի ստորև թվարկված հնարավոր ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ ներկայացված բոլոր այլ տեղեկությունները:

Ներկայացվող ռիսկերը կարող են բացասաբար անդրադառնալ Թողարկողի պարտատոմսերի գրավչության վրա՝ հանգեցնելով գնանկման և իրացվելիության նվազման: Պարտատոմսերի վրա բացասաբար կարող է անդրադառնալ նաև ընդհանուր տնտեսական վիճակի վատթարացումը, ինչով պայմանավորված Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում՝ իր համար շահավետ գնով: Այդուհանդերձ, Թողարկողը տեղեկացնում է, որ իր գործունեությամբ նպաստելու է պարտատոմսերի շուկայի զարգացմանը՝ պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման շնորհիվ:

Հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Տոկոսադրույքի ռիսկ: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության ցուցանիշի վերանայման: Ընդունված է համարել, որ պարտատոմսերի երկրորդային շուկայում տոկոսադրույքների բարձրացումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը: Շուկայական կտրուկ փոփոխությունները, ինչպես նաև Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացումը կարող են զգալիորեն ազդել

պարտատոմսերի գրավչության վրա՝ առաջացնելով իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Արտարժույթային ռիսկ: Թողարկվող դոլարային պարտատոմսերն արտահայտված են ԱՄՆ դոլարով և հետևապես, ներդրումները և ներդրումների ետ ստացումը իրականացվելու են համապատասխանաբար ԱՄՆ դոլարով: Այս իմաստով արտարժույթային ռիսկն առնչվում է այն ներդրողներին, ովքեր սույն պարտատոմսերում ներդրման նպատակով, պետք է իրենց ֆինանսական միջոցները փոխարկեն այլ արժույթներից ԱՄՆ դոլարի:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ-ում գնաճով պայմանավորված Թողարկողի պարտատոմսերի իրական եկամտաբերությունը կարող է անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ցածր լինել (գնաճի չափով):

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողներն, ովքեր Թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն դրանք մինչև մարումը պահելու և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ՝ պայմանավորված Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

1.3. Թողարկողի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Կազմակերպությունը մասնագիտացած է բետոնի արտադրության, իներտ նյութերի մատակարարման և շինարարական տեխնիկայի վարձակալության ոլորտում: Չնայած հիմնադրվել է 2022 թվականին, ընկերությունը կարճ ժամանակահատվածում ձևավորել է կայուն հաճախորդների բազա և 2023 թվականի արդյունքներով արդեն իսկ արձանագրել է իր առաջին շահույթը՝ հաստատելով բիզնես մոդելի արդյունավետությունը: Ընկերության արտադրական բազան, որը տեղակայված է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում, հազեցած է գերմանական LIEBHERR LCM 3.0 արդի բետոնի արտադրական գծով՝ մինչև 210 մ³/ժամ արտադրողականությամբ: Արտադրական կայանն ամբողջությամբ ավտոմատացված է և ապահովում է բետոնի բարձր դասերի (ներառյալ՝ մինչև M750/B55) մշտական մատակարարում:

Ընկերությունը տրամադրում է ինչպես բետոնի արտադրության և մատակարարման, այնպես էլ շինարարական տեխնիկայի վարձակալության համալիր ծառայություններ, ինչը թույլ է տալիս ներգրավվել խոշոր ենթակառուցվածքային և արդյունաբերական նախագծերում: «ՀՄԿԱ» ՓԲԸ-ն սպասարկում է ինչպես պետական պատվերներ, այնպես էլ համագործակցում է մասնավոր հատվածի կառուցապատողների հետ՝ ապահովելով պատվերների ճշգրիտ համակարգում անհատականացված սպասարկման համակարգի միջոցով:

Ընկերության գործունեության կարևոր շրջադարձային կետերից է 2.09 հա սեփական հողատարածքի ձեռքբերումը Երևանում, որը ծառայել է որպես արտադրական բազայի ձևավորման հիմք: Բացի այդ, վերջին երեք տարիներին «ՀՄԿԱ» ՓԲԸ-ն իրականացրել է շուրջ 3.13 մլրդ ՀՀ դրամի ներդրումներ, որոնց շրջանակում ձեռք են բերվել բետոնախառնիչներ, բետոնապոմպեր, բեռնատարներ, ճակատային բեռնիչներ, տեղադրվել է 98.28 կՎտ

հզորությամբ արևային կայան, ինչպես նաև կառուցվել են նոր անգարային տարածքներ: Ներդրումների ֆինանսավորումն իրականացվել է ինչպես սեփական միջոցների, այնպես էլ ներգրավված ֆինանսական ռեսուրսների միջոցով:

2025-2026 թվականների համար ընկերության կողմից հաստատվել է նոր ներդրումային փուլ՝ ընդհանուր շուրջ 1.5 մլրդ ՀՀ դրամ ծավալով: Ներդրումային ծրագիրը ներառում է ավազի և բազալտի խճի արտադրության հիմնում, որին կուղղվի համապատասխան հանքավայրերի և սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև շրջանառու միջոցների համալրում՝ ընթացիկ խոշոր պատվերների սպասարկման և նոր արտադրատեսակների ներմուծման նպատակով: Ֆինանսավորումը նախատեսվում է ապահովել տարբեր աղբյուրներից՝ ներառյալ սեփական միջոցներ և պարտքային միջոցներ (հնարավոր պարտատոմսերի թողարկումից):

Ընկերության ֆինանսական ցուցանիշները և շահութաբերության մակարդակը ներկայումս համապատասխան են նախանշված բիզնես պլանին: Ընկերության ղեկավարությունը, վերլուծելով շուկայի միտումները, մշտապես նպատակ ունի արդիականացնել տեխնիկական պարկը, ներդնել նորարարական լուծումներ և ընդլայնել սպասարկման ծավալները՝ բարձրացնելով հաճախորդների գոհունակությունն ու պահելով աճի տեմպը:

Այս պահին ընկերությունը ներգրավված չէ որևէ դատական գործընթացի մեջ, որը կարող է եական ազդեցություն ունենալ դրա ֆինանսական կայունության կամ շահութաբերության վրա:

Ընկերության ներդրումային ռազմավարությունը և ընթացիկ գործունեությունը մշտապես գտնվում են հիմնադիրների և գործադիր մարմնի ուշադրության կենտրոնում: Ընկերությունը շարունակում է գնահատել շուկայի զարգացումները և հարմարեցնել իր գործունեությունը՝ հիմնվելով արդյունավետության, որակի և տեխնոլոգիական արդիականության վրա: Ընկերությունը հանդիսանում է ապրանքների և ծառայությունների որակով շուկայի առաջատարը՝ նպատակ դնելով շարունակել շուկայում առաջարկել նոր իննովացիոն լուծումներ և ապրանքներ:

1.4. Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ

Թողարկողի 2022-2024թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ **Աուդիտորական կազմակերպություն**):

Աուդիտորական կազմակերպությունը գրանցվել է Հայաստանում 2010թ .-ին: Սկսած նույն թվականից «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է համաշխարհային առաջատարներից մեկը հանդիսացող Grant Thornton International Ltd. հաշվապահական և աուդիտորական ընկերությունների ցանցի անդամ: Աուդիտորական կազմակերպության տնօրենն է Արմեն Հովհաննիսյանը:

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0015,
Գրիգոր Լուսավորիչի 9 շենք
Հեռ.՝ +374 10 500 964
Կայք՝ www.grantthornton.am
Էլ. հասցե՝ gta@am.gt.com

Ազդագրի կազմման գործընթացում, որպես խորհրդատու Ընկերությունն օգտվել է «Էմ Բի Բնասարինգ» ՓԲԸ (այսուհետ՝ **Խորհրդատվական կազմակերպություն**) ծառայություններից:

Խորհրդատվական կազմակերպությունը հիմնադրվել է 2018թ.-ին և մատուցում է խորհրդատվական ծառայություններ կորպորատիվ ֆինանսների մասով: Խորհրդատվական կազմակերպության տնօրենն է Դավիթ Մանուկյանը:

«Էմ Բի Քոնսալթինգ» ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 37
 Հեռ՝ (+37411) 59 00 00
 Կայք՝ www.mbconsulting.am
 Էլ. հասցե՝ info@mbconsulting.am

1.5. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

Թողարկողի կառավարման մարմիններն են բաժնետերերի ընդհանուր ժողովը, խորհուրդը, և տնօրենը: Թողարկողի կանոնադրությունով կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է:

Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից: Խորհրդի անդամների քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող պակաս լինել 3 (երեք) հոգուց:

Բաժնետերերի ընդհանուր ժողովը նշանակում է տնօրենին, վերջինս էլ՝ հաշվապահին և մյուս աշխատակիցներին:

Թողարկողի մասնակիցներն են՝

Մասնակիցը	Բաժնեմասը (ՀՀ դրամ)	Բաժնեմասի չափը (%)
Սարգիս Համլետի Իսրայելյան	445,406,175	25%
Խաչիկ Մարտունի Սահակյան	445,406,175	25%
Դավիթ Սամվելի Քոչարյան	445,406,175	25%
Սամվել Արշալույսի Մարգարյան	231,611,211	13%
Դավիթ Արշալույսի Մարգարյան	213,794,964	12%

Թողարկողի Խորհրդի կազմը ստորև բերված է աղյուսակում.

Խորհրդի Անդամ	Պաշտոնը
Իսրայելյան Սարգիս Համլետի	Խորհրդի նախագահ
Մարգարյան Սամվել Արշալույսի	Խորհրդի նախագահի տեղակալ
Մարգարյան Դավիթ Արշալույսի	Խորհրդի անդամ
Քոչարյան Դավիթ Սամվելի	Խորհրդի անդամ
Սահակյան Խաչիկ Մարտունի	Խորհրդի անդամ

Թողարկողի գործադիր մարմնի կազմը ներկայացված է ստորև.

Անունը, ազգանունը	Պաշտոն	Փորձառությունը
Ղևոնդ Գրիգորի Աբրահամյան	Տնօրեն	2022թ. սեպտեմբերից աշխատում է «ՀՄԿԱ» ՓԲԸ-ում՝ որպես արտադրամասի պետ, 2024թ. օգոստոսից՝ տնօրենի առաջին տեղակալ, իսկ 2025թ. ապրիլից՝ տնօրեն:

Կազմակերպության աշխատակիցների թիվը 2024 թվականի վերջին կազմել է 34 մշտական աշխատակից աշխատանքային պայմանագրով և 38 քաղաքացիրավական պայմանագրային աշխատակից, իսկ սույն Ազդագրի կազմման և ներկայացման պահին աշխատակիցները թիվ կազմում է 83 աշխատակից, նեռարյալ նաև քաղաքացիրավական պայմանագրային աշխատակիցները:

1.6. Թողարկվող պարտատոմսերի հիմնական վիճակագրական տվյալները

Թողարկվող պարտատոմսերն անվանական են և ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն: Թողարկվող պարտատոմսերի դիմաց տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնների միջոցով: ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում, շրջանառվում և մարվում են ԱՄՆ դոլարով, իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերը՝ ՀՀ դրամով: Պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից ԱՄՆ դոլարի նկատմամբ հրապարակված միջին փոխարժեքը:

Դոլարային պարտատոմսերի թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմելու է առավելագույնը 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար, իսկ դրամային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ:

Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը որոշվելու է թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

Մեկ դոլարային պարտատոմսի անվանական արժեքը կազմելու է 100 (հարյուր) ԱՄՆ դոլար, իսկ մեկ դրամային պարտատոմսինը՝ 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը լինելու է կիսամյակային:

Թողարկման արդյունքում ներգրավված միջոցներն ուղղվելու են Թողարկողի հիմնական գործունեության ընդլայնմանն ու արտադրական գործընթացների ապահովմանը:

1.7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները ենթակա են հաստատման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

1.8. Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել առնվազն իր ինտերնետային կայքում թողարկումից առնվազն երկու օր առաջ:

1.9. Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ՀԱՇՎԵՎՈՒԹՅՈՒՆ

(հազ. դրամ)

Ցուցանիշի անվանումը	2024թ. (Աուդիտ անցած)	2023թ. (Աուդիտ անցած)	2022թ. (Աուդիտ անցած)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	3,478,324	2,042,149	35,201
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(3,107,940)	(1,783,027)	(33,271)
Համախառն շահույթ (վնաս)	370,384	259,122	1,930
Իրացման ծախսեր	(33,239)	(17,747)	(7,106)
Վարչական ծախսեր	(140,608)	(52,981)	(12,831)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ	196,537	188,394	(18,007)
Գործառնական այլ եկամուտներ	51,296	65,806	23,104
Գործառնական այլ ծախսեր	(46,108)	(733)	(2,983)
Գործառնական շահույթ (վնաս)	201,725	253,467	2,114
Ֆինանսական ծախսեր	(188,330)	(206,402)	(50,022)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	-	-	-
Ընդհատվող գործառնականությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	-	-	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	1,593	5,527	262
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	14,988	52,592	(47,646)
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	-	-	-
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	14,988	52,592	(47,646)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(18,076)	(14,035)	89
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	(3,088)	38,557	(47,557)

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(հազ. դրամ)

Ցուցանիշի անվանումը	2024թ. (Աուդիտ անցած)	2023թ. (Աուդիտ անցած)	2022թ. (Աուդիտ անցած)
Հիմնական միջոցներ	2,631,591	2,381,155	1,378,175
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	397,850	205,467	1,046
Ոչ նյութական ակտիվներ	2,315	2,459	573
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	-	-	-
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	9,743	-	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	26,349	29,284	2,089
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	3,067,848	2,618,365	1,381,883
Պաշարներ	29,123	47,060	53,107
Տրված ընթացիկ կանխավճարներ	212,132	-	-
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	451,916	148,086	600
Այլ դեբիտորական պարտքեր	-	227,710	232,815
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	157,622	45,911	15,412
Այլ ընթացիկ ակտիվներ	57,000	20,175	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	907,793	488,942	301,934
Ընդամենը ակտիվներ	3,975,641	3,107,307	1,683,817
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գույտ գումար	1,781,621	979,683	417,500
Էմիսիոն եկամուտ	-	-	-
Կուտակված շահույթ (վնաս)	(12,088)	(9,000)	(47,557)
Պահուստային կապիտալ	-	-	-
Սեփական կապիտալի այլ տարրեր	-	-	-
Ընդամենը սեփական կապիտալ	1,769,533	970,683	369,943
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	766,356	1,102,125	870,322
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	285,414	255,258	138,704
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	1,051,770	1,357,383	1,009,026
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	739,522	549,874	156,015
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	194,951	97,446	6,621
Ստացված ընթացիկ կանխավճարներ	-	-	-
Այլ կրեդիտորական պարտքեր	22,607	16,738	2,383
Այլ ընթացիկ պարտավորություններ	197,258	115,183	139,829
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	1,154,338	779,241	304,848
Ընդամենը պարտավորություններ	2,206,108	2,136,624	1,313,874
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	3,975,641	3,107,307	1,683,817

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

(հազ. դրամ)

Ցուցանիշի անվանումը	2024թ. (Աուդիտ անցած)	2023թ. (Աուդիտ անցած)	2022թ. (Աուդիտ անցած)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	45,911	15,412	-
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	183,209	325,383	35,517
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(139,300)	(509,979)	(56,970)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	67,802	215,095	36,865
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	157,622	45,911	15,412

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2024թ. (Աուդիտ անցած)	2023թ. (Աուդիտ անցած)	2022թ. (Աուդիտ անցած)
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	(98)	2,579	(4,709)
Սեփական կապիտալի շահութաբերություն	-0.2%	5.8%	-12.9%
Ակտիվների շահութաբերություն	-0.1%	1.6%	-2.82%
Զուտ շահույթի մարժա	-0.1%	1.9%	-135.1%
Կապիտալի համարժեքության գործակից	44.5%	31.2%	22.0%
Ֆինանսական կախվածության գործակից	1.25	2.20	3.55
Բացարձակ իրացվելիության գործակից	0.14	0.06	0.05
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.76	0.57	0.82
Ընդհանուր իրացվելիության գործակից	0.79	0.63	0.99
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	11.59	27.47	58.67
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	31.48	13.29	6.22
Պաշարների շրջանառելիության գործակից	81.59	35.60	0.63
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	4.47	10.25	582.61
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	21.26	34.27	5.03
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	17.17	10.65	72.64

Քանի որ 2022թ. հանդիսանում է Կազմակերպության առաջին լիարժեք ֆինանսական տարին, որոշ ֆինանսական գործակիցներ (օրինակ՝ ակտիվների կամ սեփական կապիտալի շահութաբերություն), որոնք սովորաբար հաշվարկվում են տարվա սկզբի և վերջի միջին արժեքների հիման վրա, հաշվարկվել են տվյալ տարվա վերջի ցուցանիշներով: Նման

մոտեցումը կիրառվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ տարվա սկզբի մնացորդները բացակայում են կամ չէին արտացոլում Կազմակերպության լիարժեք գործունեությունը:

Ֆինանսական ցուցանիշների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 3-ում:

ԾԱՆՈԻՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ՄԱՍ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ռիսկային գործոններ

Ինչպես հայտնի է արժեթղթերում ներդրումները ենթադրում են ռիսկի որոշակի մակարդակ, որոնք գալիս են տարբեր աղբյուրներից: Հաշվի առնելով այս հանգամանքը, կոնկրետ ներդրումային որոշում կայացնելուց առաջ ներդրողները պետք է ուշադիր վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Այդուհանդերձ, Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի գործնականում կարող են առաջանալ այլ ռիսկեր ևս, ինչը ներդրողից պահանջում է հստակ պատկերացնել ներդրման էությունը և առաջնորդվել սեփական փորձով:

Ազդագրում թվարկված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Կազմակերպության վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և, հետևաբար, գնի անկմանը:

Ֆիզիկական անձ ներդրողներին հայտնվում է, որ **ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:**

Թողարկողի կողմից առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Տոկոսադրույքի ռիսկ: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության ցուցանիշի վերանայման, ընդ որում ընդունված է համարել, որ այլ հավասար պայմաններում պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների բարձրացումն այլ հավասար պայմաններում հանգեցնում է պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը: Շուկայական կտրուկ փոփոխությունները, ինչպես նաև Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացումը կարող են զգալիորեն ազդել պարտատոմսերի գրավչության վրա՝ առաջ բերելով իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Արտարժույթային ռիսկ: Թողարկվող դոլարային պարտատոմսերն արտահայտված են ԱՄՆ դոլարով և հետևապես, ներդրումները և ներդրումների էտ ստացումը (պարտատոմսերի ձեռք բերման/մարման դիմաց ստացվող գումարներ) իրականացվելու են համապատասխանաբար ԱՄՆ դոլարով: Ուստի, այս իմաստով արտարժույթային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ,

ովքեր, իրենց դրամական միջոցները սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով, պետք է իրենց ֆինանսական միջոցները փոխարկեն այլ արժույթներից ԱՄՆ դոլարի:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր (գնաճի չափով):

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողները, ովքեր Թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն դրանք մինչև մարումը պահելու և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավարության բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

2.2. Հիմնական տեղեկատվություն

Կազմակերպության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումը և դրան հետևող տեղաբաշխումները իրականացվում են ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով, որոնք ուղղվելու են Թողարկողի հիմնական գործունեության՝ բետոնի արտադրության և շինարարական տեխնիկայի վարձակալության ոլորտում իր ծրագրերի ֆինանսավորմանը: Մասնավորապես, ներգրավվող միջոցները նախատեսվում է ուղղել ավագի և բազալտի խճի արտադրության ընդլայնման, ինչպես նաև ընթացիկ խոշոր պատվերների սպասարկման համար շրջանառու կապիտալի համալրմանը՝ ներառյալ նոր տեսակի և ներմուծվող հումքերի ձեռքբերումը:

2.3. Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ

2.3.1. Արժեթղթերի տեսակը, արժույթը և դասը

Թողարկվող պարտատոմսերը անվանական, արժեկտրոնային, առանց ապահովվածության պարտատոմսեր են, անբաժանելի են և փոխարկելի չեն: Թողարկողի պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

2.3.2. Երկիրը

Թողարկումն իրականացվում է ՀՀ-ում, ՀՀ օրենսդրության համաձայն, և դրա շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.3. Արժեթղթերի ձևը

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերը ոչ փաստաթղթային են: Պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ **Դեպոզիտարիա**) կողմից:

2.3.4. Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ՝ դրամով թողարկվող պարտատոմսերի համար, և 100 (հարյուր) ԱՄՆ դոլար՝ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար: Թողարկվող և տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը կհաշվարկվի թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

2.3.5. Թողարկման արժույթը

Թողարկման արժույթը դրամային պարտատոմսերի դեպքում ՀՀ դրամն է, իսկ դոլարային պարտատոմսերի դեպքում՝ ԱՄՆ դոլար:

2.3.6. Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

- առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները.
- երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.
- երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.
- չորրորդ հերթին մարվում է բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը.
- հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի.
- վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին:

2.3.7. Արժեթղթերից բխող իրավունքները

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

- Ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը:
- Իրականացնել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող ցանկացած գործառույթ:
- Թողարկման օրվանից հաշված կիսամյակային պարբերությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
- Պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի

մարման գումարի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

- Կազմակերպության կողմից պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով արտադատական և/կամ դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
- Դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք:
- Օգտվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Միաժամանակ, պարտատոմսի սեփականատերը պարտավոր է պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՄԲ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ:

2.3.8. Պարտատոմսերի արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

Պարտատոմսերի արժեկտրոնների տարեկան տոկոսադրույքը կսահմանվի Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեկտրոնները հաշվարկվում են պարտատոմսերի տեղաբաշխման առաջին օրվանից: Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային եկամուտները վճարվելու են կիսամյակային պարբերականությամբ:

Ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի արժեկտրոնները վճարվելու են ՀՀ դրամով: Վճարման ենթակա գումարները հաշվարկվելու են արժեկտրոնի վճարման օրվան նախորդող օրվա 16:00-ի դրությամբ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքի հիման վրա:

Արժեկտրոնները սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու են արժեկտրոնների հաշվարկման օրը: Արժեկտրոնային եկամտի վճարման (մարման) օրվա ոչ աշխատանքային լինելու դեպքում, վճարումը կկատարվի հաջորդող աշխատանքային օրը:

Արժեկտրոնային եկամուտների վճարումը Թողարկողի կողմից կատարվելու է արժեկտրոնի հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ Դեպոզիտարիայից ստացված սեփականատերերի և անվանատերերի ցուցակում ներառված անձանց՝ փոխանցելով այդ ցուցակում նշված համապատասխան բանկային հաշիվներին:

Թողարկողը պարտավոր է արժեկտրոնների վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցները արժեկտրոնների վճարման օրն ապահովել և կուտակել Հաշվարկային բանկում բացված հաշվի վրա:

Թողարկողը պարտավորվում է արժեկտրոնների վճարման օրը Հաշվարկային բանկ ներկայացնել պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից տեղեկանք՝ պարտատոմսերի արժեկտրոնները ստանալու իրավունք ունեցող անձանց վերաբերյալ:

Պարտատոմսերի սեփականատերեր և/կամ անվանատերերը արժեկտրոնների գումարները ստանում են մինչև 0.1 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում կլորացումն իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը): Թվաբանական կլորացման կանոնի համաձայն, միավորի ամբողջ թիվը մնում է անփոփոխ, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և մեծանում 1 միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Արժեկտրոնների գումարները վճարվում են անկանխիկ: Թողարկողն այդ միջոցները փոխանցում է արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակում նշված բանկային հաշիվներին: Բանկային հաշվեհամարի ճիշտ չլինելու դեպքում Թողարկողը՝ հաշվեհամարը ճշտելու և համապատասխան փոխանցում իրականացնելու նպատակով հարցում է ուղարկում Հաշվի օպերատորին (Համաձայն ՀՀ ԿԲ Խորհուրդի Կանոնակարգ 5/10 – ի «անձ, որը հաշվետիրոջից կամ թողարկողից ստացված հանձնարարականները և այլ տեղեկությունները (փաստաթղթերը) փոխանցում է Կենտրոնական դեպոզիտարիային արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնությունների կատարման համար, ինչպես նաև օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրին համապատասխան միջնորդավորում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունները»):

Այն դեպքում, երբ բանկային հաշվեհամարը բացակայում է կամ ճիշտ չէ, գումարը կփոխանցվի/կստեղծվի -նոտարի մոտ այդ նպատակով բացված դեպոզիտային հաշվին, ինչից հետո Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին հայտնաբերելու ու նրան վճարելու ենթակա գումարը փոխանցելու ուղղությամբ:

Իսկ ինչ վերաբերվում է թողարկվող պարտատոմսերի գծով կիսամյակային արժեկտրոնային եկամտի հաշվարկին, ապա այն կկատարվի հետևյալ բանաձևով՝ (անվանական արժեք*արժեկտրոնային եկամտաբերություն/2):

2.3.9. Պարտատոմսերի մարման ժամկետը և արժեքը

Պարտատոմսերի մարման ժամկետը ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Պարտատոմսերը մարվելու են իրենց անվանական արժեքով:

Պարտատոմսերի արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի պայմանագիրը լուծվում է պարտատոմսերի մարման օրը:

Թողարկողը պարտավոր է պարտատոմսերի մարման համար անհրաժեշտ դրամական միջոցները մինչև պարտատոմսերի մարման օրը ապահովել և կուտակել Հաշվարկային բանկում բացված հաշվի վրա:

Պարտատոմսերի մարման գումարները սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա գումարները վճարվում են դրան հաջորդող աշխատանքային օրը:

Պարտատոմսերի մարման գումարները վճարվում են անկանխիկ: Թողարկողն այդ միջոցները փոխանցում է արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակում նշված բանկային հաշիվներին: Բանկային հաշվեհամարի ճիշտ չլինելու դեպքում Թողարկողը՝ հաշվեհամարը ճշտելու և համապատասխան փոխանցում իրականացնելու նպատակով հարցում է ուղարկում Հաշվի օպերատորին:

ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են համապատասխանաբար ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:

Հաշվի առնելով պարտատոմսերի մարման հետ կապված միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը, ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, ինչը նշանակում է, որ ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ ըստ միջնորդ բանկերում գործող սակագների:

Պարտատոմսերի վաղաժամկետ հետգնում և մարում չի նախատեսվում՝ բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու հայտի՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բորսա) կողմից մերժման դեպքի, որի պարագայում տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:

2.3.10. Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսի տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվելու է հետևյալ կերպ՝

$$\text{ՊՏԵ} = (1 + S/Z)^Z - 1,$$

Որտեղ՝

ՊՏԵ - տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունն է:

S - տարեկան արժեկտրոնների տոկոսադրույքն է:

Z - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների վճարման հաճախականությունն է:

2.3.11. Կազմակերպության պարտատոմսեր թողարկելու որոշման համառոտ բովանդակություն

Կազմակերպության անվանական արժեկտրոնային պարտատոմսերը թողարկվելու են համաձայն Կազմակերպության Խորհրդի նիստի 2025թ. մայիսի 14-ի որոշման, որոնցով որոշվել է.

Թողարկել և տեղաբաշխել կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր՝ հետևյալ պայմաններով՝

1. 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար առավելագույն ծավալով, 100 (հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ, առավելագույնը 50,000 (հիսուն հազար) հատ ոչ փաստաթղթային, անվանական, արժեկտրոնային պարտատոմսեր, որոնց.
 - փաստացի թողարկման և տեղաբաշխման քանակը որոշվում է համապատասխան թողարկման ծավալի ու անվանական արժեքի,
 - շրջանառության ժամկետը ենթակա է որոշման պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ,
 - արժեկտրոնը ենթակա է որոշման պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ, և
2. 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ առավելագույն ծավալով, 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, արժեկտրոնների կիսամյակային վճարումների

պարբերականությամբ, առավելագույնը 30,000 (երեսուն հազար) հատ ոչ փաստաթղթային, անվանական, արժեկտրոնային պարտատոմսեր, որոնց.

- փաստացի թողարկման և տեղաբաշխման քանակը որոշվում է համապատասխան թողարկման ծավալի ու անվանական արժեքի,
- շրջանառության ժամկետը ենթակա է որոշման պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ,
- արժեկտրոնը ենթակա է որոշման պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

3. Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ժամկետները ենթակա են որոշման Կազմակերպության կողմից:
4. Իբրև տեղաբաշխող «ԱՐՄԲՐՈՎ» բաց բաժնետիրական ներդրումային ընկերության հետ Տնօրենին հանձնարարել կնքել պարտատոմսերի չերաշխավորված տեղաբաշխման պայմանագիր, վերջինիս վերապահելով որոշելու դրա պայմանները:
5. Պարտատոմսերը տեղաբաշխվելու են արտաբորսայական տեղաբաշխմամբ և առանց բաժանորդագրության, սակայն Ազդագիրը Կենտրոնական Բանկի կողմից գրանցվելուց և պարտատոմսերը տեղաբաշխվելուց հետո մեկ ամսվա ընթացքում Կազմակերպությունը դիմելու է Բորսա, կարգավորվող շուկայում պարտատոմսերը ցուցակելու և առևտրին թույլտարելու նպատակով:

2.3.12. Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը

Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ սահմանափակումներ չեն սահմանվում: Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ այլ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ **Օրենք**) և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի: Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսա՝ պարտատոմսերը Բորսայում ցուցակելու/առևտրին թույլտվություն ստանալու համար: Պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Կազմակերպության պարտատոմսերը չեն կարող Օրենքով սահմանված կարքով վաճառվել կարգավորվող շուկայից դուրս, բացառությամբ ԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բացառությունների:

Բորսայում պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվության հայտի մերժման դեպքում, տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:

2.3.13. Տեղաբաշխվող պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Կարևոր ծանուցում: ՉՆԱՅԱԾ ԱՅՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՆ, ՈՐ ԹՈՂԱՐԿՈՂԸ, ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼՈՎ ԻՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՋԱՆՔԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ, ՍՈՒՅՆ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ԱՐԺԵԹՂԹԵՐԻՑ ՍՏԱՅՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ, ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ ԹՈՂԱՐԿՈՂԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՀԱՅՏԱՐԱՐԵԼ, ՈՐ ՆԵՐԴՐՈՂՆԵՐՆ ԱՅՆ ՉՊԵՏՔ Է ՀԱՄԱՐԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԱՆԵԼԻՄ ՀԻՄՆՎԵՆ ՄԻԱՅՆ ԱՅՍ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆՅՈՒԹԻ ՎՐԱ: ԹՈՂԱՐԿՈՂԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ, ՈՐ ՆԵՐԴՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ՊԱՀԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾԻՆ, ԿԱՄ ՀԱՄԱՐԺԵՔՈՐԵՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ ՑԱՆԿԱՅԱԾ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՄ ՕԳՏՎԵԼ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ: ԹՈՂԱՐԿՈՂԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՀԱՅՏԱՐԱՐԵԼ, ՈՐ ՍՈՒՅՆՈՎ ԶԵՐԾ Է ՄՆՈՒՄ ՑԱՆԿԱՑԱԾ ՆԵՐԴՐՈՂԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՑ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ երկու դեպքում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից (արժեկտրոնային եկամուտ) և
- պարտատոմսի վերավաճառքից (կապիտալի հավելված):

Տեղաբաշխվող պարտատոմսերից ստացվող եկամուտները ենթակա են հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

- Շահութահարկ,
- Եկամտային հարկ:

Պարտատոմսերից ստացվող եկամտի շահութարկով հարկման կարգը և նկարագիրը

ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների, «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված հատուցման հիմնադրամը:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Հարկային օրենսգիրք) համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ ռեզիդենտ կազմակերպություն) է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը ՀՀ-ն է:

ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ կազմակերպություն) է համարվում այն կազմակերպությունը, որը Հարկային օրենսդրության համաձայն չի համարվում ռեզիդենտ կազմակերպություն:

Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 (տասնութ) տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Համաձայն Հարկային օրենսգրքի՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներն են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ, Հայաստանում գտնվող

գույքը վարձակալության տալուց եկամուտներ, գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելաճ և այլ պասիվ եկամուտներ:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած եկամտից, վճարման աղբյուրի մոտ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են 10 (տասը) տոկոս դրույքաչափով, եթե այլ արտոնություններ նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ:

Պարտատոմսերից ստացվող եկամտի եկամտային հարկով հարկման կարգը և նկարագիրը

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ որպես ֆիզիկական անձինք, եկամտային հարկ վճարողներ են համարվում միայն անձնական եկամուտների մասով:

Հարկային օրենսդրության համաձայն, ՀՀ ռեզիդենտ են համարվում այն ֆիզիկական անձինք, որոնք հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը) Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվել են 183 և ավելի օր կամ որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում (մասնավորապես, եթե ՀՀ-ում է գտնվում նրանց տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը) կամ ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող՝ ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձինք:

ՀՀ ոչ ռեզիդենտ են համարվում այն ֆիզիկական անձինք, որոնք, վերը նշված կարգավորումներին համապատասխան, չեն հանդիսանում ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ աղբյուրներից և նրա սահմաններից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների:

Տոկոսագումարների համար եկամտային հարկը հաշվարկվում է 10 (տասը) տոկոս դրույքաչափով, եթե այլ արտոնություններ նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսագումարների յուրաքանչյուր վճարման դեպքում:

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի դրույթների համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Թողարկողը:

2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1. Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Պարտատոմսերի տեղաբաշխվելու են Բորսայից դուրս, ուղիղ վաճառք միջոցով: Պարտատոմսերը տեղաբաշխվելու են առանց բաժանորդագրության: Ազդագիրը Կենտրոնական Բանկի կողմից գրանցվելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո մեկ ամսվա ընթացքում Կազմակերպությունը դիմելու է Բորսա, կարգավորվող շուկայում պարտատոմսերը ցուցակելու և առևտրին թույլտարելու նպատակով: Տեղաբաշխումն սկսվելու օրը ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսն ձեռք բերել ցանկացող անձը պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը լրացնելուց և պատշաճ կերպով ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պետք է կատարի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի վճարում: Այն դեպքում, երբ վճարումը կատարվում է ձեռքբերման օրը 16:30-ից հետո, դրանք համարվում են մուտքագրված վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Վճարումը համարվում է պատշաճ կատարված այդ նպատակով բացված բանկային հաշվիներին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնելիս, ներդրողները պետք է հստակ տեղեկացված լինեն, որ հայտ-հանձնարարականների չբավարարման կամ մասնակի չբավարարման դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ բանկային հաշվի վրա մնալը՝ մինչև պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Այն դեպքերում, երբ պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարները կատարվում են բանկային փոխանցման միջոցով, հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը իրենց հաշվին հոգում են ներդրողները:

Այն հայտ-հանձնարարականները, որոնց ներկայացումից հետո սահմանված ժամկետում ներդրողների կողմից համապատասխան վճարում չի իրականացվում, համարվում են անվավեր:

Հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ վճարվող դրամական միջոցների չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V = P \times Q$$

որտեղ՝

- V-ն հայտում նշված քանակի պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ վճարվող դրամական միջոցների չափն է:
- P-ն պարտատոմսի գինն է՝ հայտի Տեղաբաշխողին ներկայացման օրվա դրությամբ: Այն հաշվարկվում է Ազդագրի 2.4.3.1 բաժնի համաձայն:
- Q-ն պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:

2.4.1.1. Առաջարկի ընդհանուր ծավալը

Սույն ծրագրային ազդագրի հիման վրա տեղաբաշխվող պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը կազմում է առավելագույնը 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ և առավելագույնը 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար:

2.4.1.2. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ, ինչը կհրապարակվի Թողարկողի www.hska.am և Տեղաբաշխողի www.armbrok.com ինտերնետային կայքերում՝ հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն մեկ օր առաջ:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ազդագրի լրացում, որը կապված է Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է Տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 5 աշխատանքային օրը՝ Ազդագրի լրացման հրապարակումից հետո:

Վերադարձման ենթակա գումարները տեղաբաշխումը չեղյալ համարելու կամ հետաձգելու որոշումն ընդունելու օրվանից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են վերադարձման Տեղաբաշխողի կողմից: Վերադարձն իրականացվելու է համապատասխան ներդրողի բանկային հաշվին անկանխիկ փոխանցմամբ: Տեղաբաշխումը դադարեցնելու որոշման կայացման դեպքում տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողները ետ են ստանում կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Այդ պարագայում արժեկտրոնային եկամուտը հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման օրվա միջև ընկած ժամանակահատվածի համար:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ Օրենքի համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Տեղաբաշխողը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.1.3. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Պարտատոմսեր ձեռք բերելու նպատակով ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտերը և պատշաճ կերպով դրանք ներկայացնեն

Տեղաբաշխողին: Դրանով նրանք կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, որով էլ այդ պայմանները պարտադիր կդառնան ներդրողների համար:

Պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը լրացնելուց և պատշաճ կերպով ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պետք է թողարկման նպատակով ստորև ներկայացված Տեղաբաշխողի բանկային պարտատոմսի արժույթին համապատասխան հաշվեհամարին (այսուհետև՝ Հաշիվ) կատարի պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի վճարում՝ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Բանկի անվանումը	Դրամային հաշիվ	Դոլարային հաշիվ
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	2500000122610100	2500000122610101

Ստացող՝ ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ,

Փոխանցման նպատակ՝ ՀՄԿԱ ՓԲԸ – ի պարտատոմսերի ձեռքբերում:

Թողարկման նպատակով Հաշվին դրամական միջոցները ստանալուց անմիջապես հետո Թողարկողի թողարկման հաշվից համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար Տեղաբաշխողը Դեպոզիտարիային է ներկայացնում պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր: Այն գումարները, որոնք թողարկողման նպատակով բացված հաշվեհամարին ստացվել են պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո, եթե Տեղաբաշխողի և ներդրողի միջև այլ համաձայնություն առկա չէ, ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Տեղաբաշխողի կողմից ստացման ժամկետից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը համարվում է պատշաճ կերպով առաքված Տեղաբաշխողին, եթե այն առաքվել է Տեղաբաշխողի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկով կամ առձեռն՝ Տեղաբաշխողին այցելելով և առկա է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում:

Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝

- **Հասցե՝** ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 39,
- **Էլեկտրոնային փոստ՝** ib@armbrok.am,
- **Հեռ.՝** +37411 590000, +37495 590016
- **Սի Բի Էյ Նեթ՝** Armbrok OJSC/CBANet:

Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի Հավելված 1-ում: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի Հավելված 2-ում:

Պարտատոմսեր ձեռք բերել ցանկացող անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Ֆիզիկական և/ կամ իրավաբանական անձինք պարտատոմսերի ձեռքբերման համար լրացնում են հայտ-հանձնարարականում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտի վավերականությունն ապահովելու համար:

Հայտում նշված «Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը» դաշտում պետք է նշվի «Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ» դաշտում ամրագրված թվի և «Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը» դաշտում ամրագրված թվի արտադրյալը:

2.4.1.4. Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն կարող է նախատեսվել Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տեղաբաշխման ընթացքում հնարավոր է որևէ հայտ-հանձնարարականի մասնակի բավարարում:

Մասնակի բավարարման դեպք կարող է առաջանալ, երբ հայտում նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակը գերազանցում է հայտը ներկայացնելու պահին առկա տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը:

Միաժամանակ ներկայացված հայտ-հանձնարարականների դեպքում, եթե հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա տվյալ հայտ-հանձնարարականները բավարարվում են համամասնորեն՝ ըստ հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող պարտատոմսերի ընդհանուր քանակում յուրաքանչյուր հայտ-հանձնարարականով նշված ձեռքբերվող պարտատոմսերի քանակի մասնաբաժնի:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Տեղաբաշխողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

2.4.1.5. Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Անվավեր են ճանաչվում և տեղաբաշխմանը չեն մասնակցում այն ներդրողների հայտ-հանձնարարականները, ովքեր հայտի ներկայացումից հետո սահմանված ժամկետում չեն կատարել համապատասխան վճարումը:

Բացառությամբ վերը ներկայացված դեպքերից հայտերը չեն կարող հետ կանչվել ներդրողների կողմից դրանք պատշաճ կերպով առաքելուց, Տեղաբաշխողի կողմից դրանց ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո:

2.4.1.6. Նվազագույն և առավելագույն գումարները

Պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումների վերաբերյալ որոշումներ կարող են կայացվել միայն Թողարկողի Խորհրդի կողմից տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.4.1.7. Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը

Իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք Թողարկողի պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարումները պետք է կատարեն թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հաշվեհամարներին, որոնք նշված են Ազդագրի 2.4.1.3 կետում: Պարտատոմսերի

ձեռքբերման հայտ-հանձնարարականները բավարարվելուց և բավարարման մասին տեղեկացվելուց հետո ներդրողները կարող են ստանալ արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից:

2.4.1.8. Առաջարկի արդյունքների հրապարակումը

Տեղաբաշխման արդյունքները ենթակա են հրապարակման Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հրապարակային տեղաբաշխումն սկսելու պահից յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից հետո ոչ ուշ, քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, Թողարկողը պարտավոր է ՀՀ ԿԲ ներկայացնել հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով:

2.4.1.9. Նախապատվության իրավունքը

Առաջնահերթություն կունենա այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հաշվեհամարներին ավելի վաղ կստացվի:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

2.4.2. Տեղաբաշխման պլանը

2.4.2.1. Ներդրողների խմբերը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այդ թվում՝ որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին:

2.4.2.2. Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Ներդրողներն իրենց հայտերի բավարարման մասին կկարողանան տեղեկացվել Դեպոզիտարիայի հաշվի օպերատորների կողմից տրված քաղվածքի միջոցով վերջիններիս կողմից հաստատված կարգով և ժամկետներով:

Ներդրողները Տեղաբաշխողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Տեղաբաշխողին է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/երը:

2.4.3. Առաջարկի գինը

2.4.3.1. Արժեթղթերի գինը

Պարտատոմսի գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց որոշվելու է հետևյալ բանաձևով:

$$P = \frac{C}{f} \sum_{i=1}^N \left[\frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} \right] + \left[\frac{A}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}} \right]$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի/անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է:

DCC - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է:

P - պարտատոմսի գինն է:

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=2 կիսամյակային վճարումների դեպքում):

N - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է:

Y - պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է:

C - տարեկան արժեկտրոնի չափն է:

A - պարտատոմսի անվանական արժեքն է:

i - արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում **i** արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ից մինչև **N** արժեքները (երբ **N**-ը ընդունում է 1 արժեք, **i** ն նույնպես ընդունում է 1 արժեք):

Օրերի հաշվարկման պայմանականությունն է՝ փաստացի/փաստացի.

DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 – D1M1Y1

DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 – D2M2Y2

որտեղ՝

D1M1Y1 - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,

D2M2Y2 - գործարքի կատարման ամսաթիվն է,

D3M3Y3 - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

Տեղաբաշխման ժամկետի ընթացքում թողարկվող պարտատոմսերի գները Տեղաբաշխումը սկսելուց առաջ լրացուցիչ կիրառարակվեն Թողարկողի www.hska.am և/կամ Տեղաբաշխողի www.armbrok.com ինտերնետային կայքերում:

Պարտատոմսերի ձեռքբերման դեպքում հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը հոգում են ներդրողներն իրենց հաշվին:

Բացի այդ, ներդրողները պետք է ունենան Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացված արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կրեն դրա հետ կապված բոլոր ծախսերը:

2.4.4. Տեղաբաշխումը

2.4.4.1. Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Ծրագրային ազդագրի հրապարակման պահին Թողարկողը որևէ տեղաբաշխողի հետ երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու վերաբերյալ կնքված պայմանագիր չունի: Սակայն, տեղաբաշխման առանձին թողարկումների համար Թողարկողը կարող է ներգրավել երաշխավորված տեղաբաշխում իրականացնողների: Այդ պարագայում, տեղաբաշխողներին վերաբերող տեղեկատվությունը (այդ թվում՝ անվանումները, գտնվելու վայրերը, երաշխավորված ծավալը և այլն) ենթակա է ներկայացման Ազդագրի 1.8 կետով ներկայացված վերջնական պայմաններով:

2.4.4.2. Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Կազմակերպության կողմից թողարկվող պարտատոմսերի չերաշխավորված տեղաբաշխումն իրականացվելու է մասնագիտացված տեղաբաշխողի՝ «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի կողմից:

Տեղաբաշխողի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, Հանրապետության 39 շ., հեռ.՝ +(374 11) 59 00 00, էլ. Փոստ՝ ib@armbrok.am, , պաշտոնական ինտերնետային կայք՝ www.armbrok.am:

Համաձայն պայմանագրի՝ «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ն պարտավորվել է լավագույն ջանքերի գործադրմամբ, սակայն չերաշխավորված եղանակով տեղաբաշխել Թողարկողի կողմից թողարկվող անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային մինչև 3,000,000,000 (երեք միլիան) ՀՀ դրամ և մինչև 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով պարտատոմսերը:

Պարտատոմսերի տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի դեպքում պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (երաշխավորված կամ չերաշխավորված), պարտատոմսերի ծավալը, քանակը, պարտատոմսերի տեղաբաշխման կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի իրավունքներն ու պարտականությունները, Տեղաբաշխողին վճարման ենթակա գումարի չափն ու կարգը, Թողարկողի և Տեղաբաշխողի պատասխանատվությունը սահմանվել են վերջիններիս միջև կնքված լրացուցիչ համաձայնագրերով:

2.4.4.3. Տեղաբաշխման պայմանները

Համաձայն Թողարկողի և Տեղաբաշխողի միջև կնքված պայմանագրի և համաձայնության տեղաբաշխման միջնորդավճարը չի կարող պակաս լինել 5 միլիոն ՀՀ դրամից՝ Թողարկողի կողմից Տեղաբաշխողին վճարման ենթակա տեղաբաշխման միջնորդավճարի վերջնական չափը որոշվելու է Թողարկողի և Տեղաբաշխողի միջև հավելյալ՝ տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

2.4.4.4. Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը

Ազդագրի հրապարակման պահին Թողարկողը որևէ տեղաբաշխողի հետ երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու վերաբերյալ կնքված պայմանագիր չունի: Սակայն, տեղաբաշխման առանձին թողարկումների համար Թողարկողը կարող է ներգրավել երաշխավորված տեղաբաշխում իրականացնողների: Այդ պարագայում, տեղաբաշխողների

հետ կնքված պայմանագր(եր)ին վերաբերող տեղեկատվությունը ենթակա է ներկայացման Ազդագրի 1.8 կետով ներկայացված վերջնական պայմաններով:

2.4.4.5. Վճարում ընդունող բանկերը և պահառուները

Պարտատոմսերի դիմաց վճարումները պետք է կատարել Տեղաբաշխողի կողմից ստորև նշված հաճախորդների միջոցների համար բացված պարտատոմսի արժույթին համապատասխան բանկային հաշվեհամարին:

Բանկի անվանումը	Դրամային հաշիվ	Դոլարային հաշիվ
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	2500000122610100	2500000122610101

Վճարման պայմաններում պետք է նշել.

- Ստացող՝ ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ,
- Փոխանցման նպատակ՝ ՀՄԿԱ ՓԲԸ – ի պարտատոմսերի ձեռքբերում:

Դեպոզիտարիայի միջոցով է իրականացվելու Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումը: Դեպոզիտարիան հանդես է գալու որպես անվանական արժեթղթերի արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակ՝ իր համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Պարտատոմսերի հաշվառում կարող է իրականացվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից: Դրա համար հարկավոր է այդ պահառուի մոտ բացել և վարել արժեթղթերի հաշիվ՝ պարտատոմսերի սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա 5-րդ հարկ (հեռ.՝ +374 60 615 555, 10 543 321):

Թողարկողի պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատորն է «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ն: Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք կամ նրանց անվանատերերը պետք է ունենան արժեթղթերի հաշիվներ, որոնք բացվում և սպասարկվում են Դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջնորդությամբ, վերջիններիս կողմից սահմանված պայմաններով և սակագներով: Հաշվի օպերատորների ցանկին կարելի է ծանոթանալ Դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.cda.am:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձինք ցանկացած բանկում իրենց անվամբ պետք է ունենան դրամային բանկային հաշիվ դրամային պարտատոմսեր գնելու դեպքում, իսկ դոլարային պարտատոմսեր գնելու դեպքում դրամային և դոլարային հաշիվներ: Հաշիվների վերաբերյալ տվյալները պետք է ներկայացվեն Դեպոզիտարիային պարտատոմսերում կատարված ներդրումների մարման և արժեկտրոնային եկամուտների վճարման համար:

2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

2.5.1. Առևտրին թույլտվությունը

Ազդագիրը ԿԲ-ի կողմից գրանցվելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո մեկ ամսվա ընթացքում Թողարկողը դիմելու է Բորսա կարգավորվող շուկայում պարտատոմսերը ցուցակելու և առևտրին թույլտարելու նպատակով: Հարկ է ընդգծել, որ Բորսան կարող է մերժել սույն կետում նշված առևտրի թույլտվության հայցը: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ:

2.5.2. Շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից Ազդագրով առաջարկվող պարտատոմսերը ոչ մի շուկայում թույլատրված չեն հրապարակային առևտրին:

2.5.3. Շուկա ստեղծողները

Կազմակերպության պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով Թողարկողը նախատեսում է ներգրավել «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին, և առկա է նախնական պայմանավորվածություն, որի հիմքով կկնքվի պայմանագիր շուկա ստեղծողի հետ:

2.6. Լրացուցիչ տեղեկատվություն

2.6.1. Խորհրդատուներ

Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը օգտվել է «Էմ Բի Քնսալթինգ» ՓԲԸ-ի խորհրդատուների ծառայություններից: «Էմ Բի Քնսալթինգ» ՓԲԸ – ն պատասխանատու չէ Ազդագրում ներկայացված տեղեկատվության ճշգրտության համար: «Էմ Բի Քնսալթինգ» ՓԲԸ-ի իրավասությունները սահմանափակված են Ազդագրում առակ տեղեկատվության ՀՀ Կենտրոնական բանկի Կանոնակարգ 4/04-ով պահանջվող ձևով ներկայացման մասով:

2.6.2. Աուդիտորական եզրակացությունը

Բացառությամբ Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվությունների, որոնք անկախ աուդիտորական ընկերությունների կողմից ենթարկվել են աուդիտի, սույն Ազդագրում ներկայացված տեղեկատվությունը անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել: Ավելին, ներկայացված տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք: Ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունների պատճենները ներկայացված են Հավելված 5-ում:

2.6.3. Թողարկողի վարկանիշը

Վարկանշող կազմակերպությունները Կազմակերպությանը և Կազմակերպության կողմից տեղաբաշխված պարտատոմսերին որևէ վարկանիշ չեն շնորհել:

ՄԱՍ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Անկախ աուդիտորները

Թողարկողի 2022-2024թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնում է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է համաշխարհային առաջատարներից մեկը հանդիսացող Grant Thornton International Ltd. հաշվապահական և աուդիտորական ընկերությունների ցանցի անդամ: Աուդիտորական կազմակերպության տնօրենն է Արմեն Հովհաննիսյանը:

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0015,
Գրիգոր Լուսավորչի 9 շենք
Հեռ.՝ +374 10 500 964
Կայք՝ www.grantthornton.am
Էլ. հասցե՝ gta@am.gt.com

3.2. Ռիսկային գործոններ

Ցանկացած կազմակերպության պարտատոմսերում ներդրումները ենթադրում են որոշակի ռիսկեր: Այդ իսկ պատճառով, նախքան պարտատոմսերի գնման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը, ներդրողը պետք է մանրակրկիտ դիտարկի և համադրի ստորև թվարկված հնարավոր ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ ներկայացված բոլոր այլ տեղեկությունները:

Թողարկողը Ազդագրում ներկայացրել է բացահայտված տեսանելի ռիսկերը և դրանց հնարավոր ազդեցությունը, նաև բացահայտել է մանրամասն տեղեկատվություն, որպեսզի ներդրողները հնարավորություն ունենան ինքնուրույն իրականացնել անկախ ռիսկերի վերլուծություն՝ ներդրման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելուց առաջ:

Ընդհանուր տնտեսության ռիսկեր: Կազմակերպության գործունեության համար լրացուցիչ ռիսկեր կարող է առաջացնել ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը, որն իր հերթին կարող է պայմանավորված լինել ինչպես ներքին, այնպես էլ տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումներով:

Թվարկված գործոններով պայմանավորված մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է հանգեցնել շինարարական ոլորտում ներդրումների և պահանջարկի նվազման, ինչը կազմի բետոնի և իներտ նյութերի վաճառքի ծավալների վրա: Վերջինս բացասաբար կանդրադառնա նաև Կազմակերպության արտադրական և վարձույթային ծառայությունների եկամուտների վրա՝ կրճատելով շահութաբերությունն ու կանխիկ հոսքերը:

Բացի այդ, համախառն եկամուտների կրճատումը բացասաբար կանդրադառնա նաև շինարարական ոլորտում գործող հաճախորդների ֆինանսական հնարավորությունների վրա՝ ստեղծելով որոշակի ռիսկեր պայմանագրային պարտավորությունների կատարման և վճարունակության առումով:

Արդեն առակ են կառուցապատման շուկայի վաճառքների դանդաղեցում և դրանով պայմանավորված վարկավորման ծավալների նվազեցում և ֆինանսական խնդիրներ որոշ կառուցապատողների մոտ: Թողարկողը դեռ չունի հավաքագրելիության խնդիրներ, և հստակ

վերահսկում է իր դեբիտորական պարտքի կառավարումը: Նաև երկարաժամկետ նոր պայմանագրերը կառուցապատողների հետ, որոնք ունեն համեմատաբար բարձր ֆինանսական կայունություն, գտնվում է այս ռիսկը:

Այս գործոնները կարող են նաև դժվարացնել Կազմակերպության համար վարկային միջոցների ներգրավումը, ինչն իր հերթին կսահմանափակի նրա ընդլայնման և զարգացման հնարավորությունները:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկ: Վերջինի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրական այնպիսի փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Կազմակերպության գործունեության, այնպես էլ շինարարական նյութերի արտադրության և շինտեխնիկայի վարձակալության շուկայի վրա: Հատկապես ռիսկեր են ներկայացնում բնապահպանական և հանքարդյունաբերական ոլորտներին վերաբերող նորմատիվ փոփոխությունները, որոնք կարող են վերանայել հումքի արդյունահանման, տեղափոխման կամ մշակման կարգավորումները՝ առաջացնելով լրացուցիչ արտոնագրային պահանջներ կամ հարկաբյուջետային բեռներ:

Նմանատիպ փոփոխությունները կարող են հանգեցնել արտադրության գործընթացի թանկացման կամ ժամանակային ձգձգումների, ինչն էլ ուղղակիորեն կազդի Կազմակերպության արդյունավետության և մրցունակության վրա: Բացի այդ, շինարարության ոլորտում կիրառվող տեխնիկայի շահագործման կանոնակարգերի խստացումը կարող է պահանջել սարքավորումների արդիականացում կամ լրացուցիչ ներդրումներ՝ ապահովելու կանոնների պահպանումը:

Նմանօրինակ օրենսդրական փոփոխությունները կարող են բարձրացնել Կազմակերպության գործունեության ծախսերը, ինչպես նաև խաթարել նախագծերի ժամանակացույցը՝ նպաստելով ֆինանսական ցուցանիշների վատթարացմանը:

Մրցակցային ռիսկը պայմանավորված է շինարարական նյութերի արտադրության և շինտեխնիկայի վարձակալության ոլորտում գործող մի շարք ընկերությունների առկայությամբ, որոնք պայքարում են շուկայի բաժնի համար: Վերջին տարիներին շինարարության ոլորտի ընդլայնման հետևանքով մեծացել է նաև բետոնի, ավազի, բազալտի խճի արտադրողների թիվը, ինչպես նաև տեխնիկայի վարձույթ առաջարկող ընկերությունների պաշարները: Նման մրցակցության պայմաններում Կազմակերպությունը ձգտում է շուկայում դիրքը պահպանել արտադրանքի բարձր որակով, հուսալի մատակարարմամբ և ձկուն գնային քաղաքականությամբ՝ ապահովելով պատվերների արագ կատարում և սպասարկման բարձր մակարդակ: Շուկայում գների տատանման արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերի մասով հաշվարկներ ներկայացված են 3.4.2. կետում:

Վարկային ռիսկ/դեֆոլտի ռիսկ: Այն առնչվում է Կազմակերպության կողմից իր վարկային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելուն կամ չկատարելուն:

Իրացվելիության ռիսկ: Կազմակերպության գործունեությունը՝ ներառյալ շինանյութերի արտադրությունը և շինտեխնիկայի վարձակալությունը, ենթադրում է դրամական հոսքերի շարունակական շրջանառություն, որոնք ինչպես մուտք են գործում Կազմակերպության հաշվեկշիռին՝ վաճառքներից և վարձակալության ծառայություններից ստացված եկամուտների տեսքով, այնպես էլ դուրս են գալիս մատակարարներին, աշխատակիցներին և այլ գործընկերներին կատարվող վճարների տեսքով: Այս համատեքստում Կազմակերպության համար իրացվելիության ռիսկեր կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներում, երբ խզում է դիտվում ակտիվների մուտքի և պարտավորությունների մարման ժամկետների միջև, ինչի հետևանքով կարող են ի հայտ գալ կարճաժամկետ ֆինանսավորման պակասի խնդիրներ:

Վերը ներկայացված հանգամանքները նախապայման են դնում իրացվելիության ռիսկի հստակ կառավարման անհրաժեշտությունը: Կազմակերպությունը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ մշտապես վերահսկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև հավասարակշռելով ֆինանսական ակտիվների մուտքը և պարտավորությունների մարման ժամկետները: Կազմակերպության իրացվելիության հետ կապված հավելյալ տվյալները ներկայացված են 3.4.2. կետում:

Տոկոսադրույքի ռիսկը կապված է շուկայում տոկոսադրույքների ընդհանուր մակարդակի անսպասելի և կտրուկ փոփոխությունների հետ, որոնք կարող են անդրադառնալ ֆինանսական գործիքների գների և եկամտաբերության վրա: Սա իր հերթին կարող է արտացոլվել Կազմակերպության տոկոսային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև դրամական հոսքերի մեծության վրա: Որպես արդյունք կարող է արձանագրվել Կազմակերպության համախառն եկամուտների և ծախսերի բացասական փոփոխություն, որի հետևանքով կնվազի շահույթի մակարդակը:

Կազմակերպության տնօրինությունը գործնական քայլեր է ձեռնարկում նաև ռիսկի այս տեսակի մշտադիտարկման, վերահսկման և մեղմման ուղղությամբ՝ հաշվի առնելով բոլոր հնարավոր սցենարները:

Արտաբժույթային ռիսկը արտաբժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունը Կազմակերպության վրա կարող է արտահայտվել մի քանի ուղղություններով՝ պայմանավորված ինչպես ներմուծվող հումքի, այնպես էլ արտաբժույթով պայմանագրային պարտավորությունների առկայությամբ: Առաջին, և թերևս ամենազգայուն ուղղությունը, վերաբերում է իներտ նյութերի արտադրության և շինտեխնիկայի սպասարկման համար անհրաժեշտ որոշ բաղադրիչների և սարքավորումների ներմուծմանը: Նման ապրանքների պարագայում ՀՀ դրամի արժեզրկումը հանգեցնում է դրանց գնաճին, ինչն իր հերթին ավելացնում է արտադրական ծախսերը և կարող է ազդել շահութաբերության վրա:

Մյուս ռիսկային ուղղությունը վերաբերելի է Կազմակերպության արտաբժույթով արտահայտված ֆինանսական պարտավորություններին: Փոխարժեքի բացասական տատանումները կարող են հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ նույն չափի պարտավորության մարումը պահանջում է ավելի մեծ ծավալով ՀՀ դրամային միջոցներ՝ իջեցնելով Կազմակերպության ֆինանսական ճկունությունը և ազդելով դրամական հոսքերի կայունության վրա:

Կազմակերպության ղեկավարությունը մշտապես հետևում է արտաբժույթի շուկայի դինամիկային և անհրաժեշտության դեպքում կիրառում է կանխարգելիչ մեխանիզմներ՝ նվազեցնելու նման ազդեցությունների բացասական հետևանքները և պահպանելու ֆինանսական ցուցանիշների կայունությունը:

Գործառնական ռիսկ: Կազմակերպության հիմնական գործունեությունը ենթադրում է մի շարք գործառնական ռիսկեր, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ բիզնեսի բնականոն ընթացքի վրա: Այդ ռիսկերը կապված են ինչպես հումքի մատակարարման, այնպես էլ արտադրական գործընթացների և տեխնիկայի աշխատանքի անխափանության հետ: Մատակարարների կողմից հումքի ուշացված մատակարարումները կարող են դանդաղեցնել արտադրական գործընթացը, ինչը կհանգեցնի պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետների խախտման և հնարավոր տույժերի կիրառման:

Բացի այդ, տեխնիկական սարքավորումների անսարքությունները կամ դրանց անբավարար քանակը կարող են խաթարել պատվերների կատարման շարունակականությունը: Նմանատիպ խնդիրների առաջացման դեպքում կազմակերպությունը ստիպված կլինի կրել լրացուցիչ ծախսեր՝ կապված վերանորոգման, ժամանակավոր փոխարինման կամ սպասարկման հետ:

Նույն կերպ, աշխատուժի հոսունության բարձր մակարդակը կարող է բերել փորձառու մասնագետների կորստի, ինչն իր հերթին կազմի արտադրողականության և սպասարկման որակի վրա:

3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին

3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

3.3.1.1. Թողարկողի անվանումը և կազմակերպչափրավական ձևը

Թողարկողի անվանումն է՝

	Լրիվ ֆիրմային անվանումը	Կրճատ անվանումը
հայերեն՝	«ՀՄԿԱ» փակ բաժնետիրական ընկերություն	ՀՄԿԱ ՓԲԸ
ռուսերեն՝	Закрывтое Акционерное Общество “ГСКА”	“ГСКА” ЗАО
անգլերեն՝	HSKA Closed Joint Stock Company	HSKA CJSC

Կազմակերպությունը գրանցվել է 2022թ. մայիսի 10-ին Պետական ռեգիստրի կողմից՝ 271.120.1236387 գրանցման համարով և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով ՀՀ օրենսդրության շրջանակներում: Կազմակերպությունը գործունեություն է ծավալում բետոնային խառնուրդի արտադրության և շինարարական տեխնիկայի վարձույթի ոլորտում՝ սպասարկելով շինարարական և ենթակառուցվածքային նախագծեր: Ներկայումս այն ունի 1 գրասենյակ Երանում:

Թողարկողի կողմից գրանցված ապրանքային նշանը՝



3.3.1.2. Թողարկողի պետական գրանցումը և գործունեության վայրը

Թողարկման հիմնադրման երկիրն է՝	Հայաստանի Հանրապետությունը
Թողարկողի պետական գրանցման վայրն է՝	0042, ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան փ. 31, բն. 12,
Թողարկողի պետական գրանցման համարն է՝	271.120.1236387
Թողարկողի պետական գրանցման ամսաթիվն է՝	10.05.2022թ.
Թողարկողի գործունեության վայրն է՝	ՀՀ, ք. Երևան, Հաղթանակ թաղամաս 1-ին փ. 100/1 տարածք
	Հեռ.՝ (+374 33) 51 05 10, 51 05 11
Կապի միջոցները՝	Էլ. փոստ՝ info@hska.am
	Կայք՝ www.hska.am

3.3.1.3. Նշանակալի դեպքերը

ՀՄԿԱ ՓԲԸ-ն հիմնադրվել է 2022 թվականի մայիսին: Ընկերության հիմքում դրված են արդյունավետության, նորարարության և բարձր որակի սկզբունքները, որոնց շնորհիվ այն կարճ ժամանակում դարձել է շուկայի տեսանելի խաղացող: Արդեն 2023 թվականի ավարտին ընկերության շահութահաշվարկում արձանագրվել է դրական շահույթ՝ հաստատելով առողջ ֆինանսական և կառավարման մոդելի արդյունավետությունը: 2024 թվականին Ընկերությունը առաքել է ավելի քան 100 000 տոննա բետոն:

Ընկերության գործունեության կարևոր շրջադարձային կետերից է գերմանական «Liebherr» ապրանքանիշի բարձր արտադրողականությամբ բետոնի գործարանի ներդրումը: Այս արտադրական համակարգն ամբողջությամբ ավտոմատացված է և հագեցած է որակի վերահսկման մոդուլներով՝ ապահովելով մինչև 210 մ³/ժամ արտադրողականություն: Արտադրության շարունակականությունն երաշխավորվում է նաև իսպանական գեներատորի և զգալի հումքային պահուստների առկայությամբ, ներառյալ 200,000 լիտր տեխնիկական ջուր, 15,000 տոննա հումք և 800 տոննա ցեմենտ:

Բացի արտադրական գործընթացների կատարելագործումից, ընկերությունը ներդրել է անհատականացված սպասարկման համակարգ, որի միջոցով յուրաքանչյուր հաճախորդ ստանում է անձնական վաճառքի մենեջեր: Սա թույլ է տալիս առավել ճշգրիտ համակարգել պատվերների ընդունման, պատրաստման և առաքման փուլերը՝ միաժամանակ ապահովելով բարձր հաճախորդների բավարարվածություն:

Ի հավելումն բետոնի արտադրությանը, ՀՄԿԱ ՓԲԸ-ն առաջարկում է նաև ժամանակակից շինարարական տեխնիկայի վարձույթ՝ շուկայի պահանջարկին համահունչ: Տեխնիկան ընդգրկում է տարբեր չափերի բետոնախառնիչներ, ինքնաբեռնվող մեքենաներ, բետոնային պոմպեր և այլ անհրաժեշտ սարքավորումներ, ինչը թույլ է տալիս գործընկեր շինարարական կազմակերպություններին գործել առավել ճկուն և արդյունավետ պայմաններում:

Այս բոլոր քայլերը նպաստել են ՀՄԿԱ ՓԲԸ-ի կայուն աճին և շուկայի նկատմամբ վստահության ձևավորմանը՝ հիմք դնելով ընկերության երկարաժամկետ հաջողություններին:

3.3.2. Ներդրումները

Թողարկողը իր գործունեության մեկնարկից ի վեր իրականացրել է խոշորածավալ ներդրումներ՝ ուղղված արտադրական և շինարարական տեխնիկական կարողությունների ձևավորմանն ու ընդլայնմանը: Ըստ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփված տվյալների՝ կազմակերպության կողմից իրականացված ներդրումների համախառն ծավալը կազմել է շուրջ 3.13 մլրդ ՀՀ դրամ, ներառյալ՝ 1.31 մլրդ ՀՀ դրամ 2022 թվականին, 1.26 մլրդ ՀՀ դրամ 2023 թվականին և 0.56 մլրդ ՀՀ դրամ 2024 թվականին:

2022 թվականին ամենախոշոր ներդրումը եղել է Երևանի Աջափնյակ վարչական շրջանում գտնվող 2.09 հա մակերեսով հողամասի ձեռքբերումը՝ ընդհանուր 400 մլն ՀՀ դրամ արժեքով: Բացի այդ, այդ տարում կազմակերպությունը համալրել է իր մեքենապարկը՝ ձեռք բերելով մի շարք շինարարական տեխնիկա՝ էքսկավատորներ, ինքնաթափ բեռնատարներ, բետոնախառնիչներ և այլ սարքավորումներ:

2023 թվականին ներդրումների գերակշիռ մասը կենտրոնացած է եղել բետոնի արտադրության գործարանի կառուցման վրա՝ ձեռք բերելով LIEBHERR LCM 3.0 արտադրական գիծը՝ շուրջ 234 մլն ՀՀ դրամ արժեքով: Բացի այդ, ձեռք են բերվել նոր սերնդի բետոնախառնիչներ, ավտոբետոնապոմպեր, HOWO TX շարքի բեռնատարներ և ճակատային բեռնիչներ:

2024 թվականին ներդրումների հիմնական ուղղությունները եղել են նոր անգարային տարածքների կառուցապատումը, 98.28 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրումը, 80 տոննա կշռունակությամբ էլեկտրոնային ավտոկշեռքի ձեռքբերումն ու տեղադրումը, ինչպես նաև ավտոբետոնախառնիչների և ավտոբետոնապոմպերի համալրում:

Ներդրումների ֆինանսավորումն իրականացվել է հիմնականում սեփական կապիտալի միջոցով՝ հիմնադիրների ներդրումների հաշվին, ինչպես նաև ներգրավված փոխառու միջոցների կիրառմամբ:

Թողարկողի կողմից 2025-2026 թվականների համար հաստատվել է ներդրումային նոր փուլ՝ ընդհանուր շուրջ 1.5 մլրդ ՀՀ դրամի ծավալով: Ներդրումների նպատակը երեք ուղղություն ունի՝

1. Ավազի արտադրություն՝ ընդհանուր մոտ 500 մլն ՀՀ դրամի ներդրմամբ, որից 100 մլն ՀՀ դրամը նախատեսվում է ուղղել հանքավայրի ձեռքբերմանը, իսկ 400 մլն ՀՀ դրամը՝ անհրաժեշտ սարքավորումների համալրմանը:
2. Բազալտի դճի արտադրություն՝ մոտ 600 մլն ՀՀ դրամ, որի շրջանակում 400 մլն դրամով կձեռք բերվի տեխնիկա, իսկ մոտ 200 մլն դրամը կհատկացվի համապատասխան հողատարածքի ձեռքբերմանը:
3. Ընթացիկ խոշոր պատվերների շրջանակում շրջանառու միջոցների համալրում՝ 200 մլն ՀՀ դրամ՝ տեղական պահանջարկի սպասարկման նպատակով, ինչպես նաև հավելյալ 200 մլն ՀՀ դրամ՝ նոր, թանկարժեք և հիմնականում ներմուծվող արտադրատեսակների և հումքերի ներգրավման համար:

Ակնկալվում է, որ վերոնշյալ ներդրումների ֆինանսավորումն իրականացվելու սեփական միջոցների և պարտքային ֆինանսավարման միջոցով, որը ներառում է սույն Ազդագրով նախատեսված պարտատոմսերի թողարկումը:

Կարևոր է նշել, որ ավազի հանքավայրի շահագործման մեկնարկը պայմանավորված է համապատասխան լիցենզիայի տրամադրմամբ, որի ընթացակարգերն իրականացվում են պետական մարմինների կողմից և կարող են տևել մինչև մեկ տարի կամ ավելի՝ կախված գործընթացի ժամանակացույցից և հնարավոր ուշացումներից:

3.4. Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Հիմնական գործունեությունը

«ՀՄԿԱ» ՓԲԸ-ն զբաղվում է շինարարական իներտ նյութերի արտադրությամբ (ավազ, բազալտի խիճ, բետոն) և շինարարական տեխնիկայի վարձակալության ծառայությունների մատուցմամբ:

Ընկերության հիմնական արտադրական բազան գտնվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում, որտեղ շահագործվում է LIEBHERR LCM 3.0 բետոնի արդի արտադրական գործարանը: «ՀՄԿԱ»-ն միակն է Հայաստանում, ով շուկայում առաջարկում է M750/B55 բետոն, ինչը հնարավորություն է տալիս ներգրավվել խոշոր ենթակառուցվածքային և արդյունաբերական նախագծերում: Ընկերության կողմից արտադրվող բետոնի տեսակներն են՝

M100/B7.5, M150/B12.5, M200/B15, M250/B20, M300/B22.5, M350/B25, M400/B30, M450/B35, M550/B45, M650/B50 և M750/B55:

Բետոնի արտադրությունից գատ, ընկերությունը տրամադրում է շինարարական տեխնիկայի վարձակալության համալիր ծառայություններ, որոնք ներառում են բետոնախառնիչներ, բետոնապոմպեր, ինքնաթափ բեռնատարներ, ճակատային բեռնիչներ, քարշակներ և այլ

մեքենատեխնիկա: «ՀՄԿԱ»-ն ակտիվորեն համագործակցում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի կառուցապատող ընկերությունների հետ:

2025-2026 թվականների համար նախատեսված ներդրումային ծրագրերը ներառում են նոր արտադրական ուղղությունների ներդրում՝ մասնավորապես ավագի և բազալտի խճի արտադրություն, ինչպես նաև բարձր արժեք ունեցող շինանյութերի ներմուծում և իրացում:

3.4.2. Հիմնական շուկաները

Ընկերությունը գործունեություն է ծավալում ՀՀ շինարարական նյութերի և շինտեխնիկայի ծառայությունների շուկայում: Վերջին տարիներին այս շուկան դինամիկ աճ է գրանցում, ինչին նպաստել են ինչպես պետական ենթակառուցվածքային ծրագրերը, այնպես էլ բազմաբնակարան և հասարակական նշանակության շենքերի կառուցապատման ծավալների աճը: Բացի այդ, կառուցապատող ընկերությունների թվի ավելացումը խթանել է բարձրորակ բետոնի, իներտ նյութերի և շինարարական տեխնիկայի պահանջարկը՝ «ՀՄԿԱ»-ի արտադրանքն ու ծառայությունները դարձնելով արդիական և մրցունակ:

Ընկերության բետոնի արտադրանքը դասակարգվում է ամրության տարբեր կարգերով, որոնցից ամենապահանջվածներն են 200, 300, 350 և բացառապես նաև 700 դասի բետոնը: Վերջինս ներկայում մատչելի է միայն «ՀՄԿԱ»-ի կողմից և եզակի է ՀՀ շուկայում՝ ապահովելով զգալի առավելություն խոշոր ենթակառուցվածքային և արդյունաբերական նախագծերում ներգրավվելու հարցում:

Ծառայությունների երկրորդ ուղղությունը՝ շինարարական տեխնիկայի վարձակալությունը (բետոնախառնիչներ, բետոնապոմպեր, ինքնաթափեր և այլ), նախատեսված է տարբեր չափերի շինարարական ընկերությունների համար: Չնայած շուկան բացառապես ներքին է, հաճախորդները ընդգրկում են ինչպես Երևանը, այնպես էլ ՀՀ տարբեր մարզեր՝ ներկայացնելով ոլորտի բազմազան սեգմենտներ:

Ընկերության հիմնական գործունեության վրա կարող են ազդեցություն ունենալ շինարարական ոլորտի ընդհանուր ներդրումային կլիման, պետական ծրագրերի ինտենսիվությունը, ինչպես նաև տնտեսական աճի տեմպերը: Այնուամենայնիվ, ընկերությունն ապացուցել է իր կայունությունն ու ճկունությունը նաև տնտեսական անկայունության պայմաններում՝ հաճախորդակենտրոն մոտեցման, բարձր որակի արտադրանքի և ժամանակին մատակարարման շնորհիվ: Վստահելի և ճկուն մատակարարի համբավը՝ ներառյալ մեծածավալ պատվերների կատարման պատրաստակամությունը, զգալիորեն նպաստել է հաճախորդների պահպանմանն ու նոր համագործակցությունների ձևավորմանը:

«ՀՄԿԱ»-ն համարվում է ոլորտի առաջատարներից մեկը՝ շնորհիվ ժամանակակից արտադրական հզորությունների, որակի վերահսկման խիստ համակարգերի, ինժեներական աջակցությամբ համալիր լուծումների և նորագույն տեխնոլոգիաների կիրառման: 700 դասի բետոնի արտադրության բացառիկությունը, արտադրական ավտոմատացումը և բարձր սպասարկման մակարդակը թույլ են տալիս ընկերությանը մրցել ինչպես գնի, այնպես էլ որակի ու արդյունավետության տեսանկյունից: Այս ամենը, զուգորդված վստահելի մատակարարի համբավով, ապահովում է ընկերության կայուն մրցակցային դիրքը շուկայում:

3.5. Թողարկողի կառուցվածքը

Կազմակերպությունը չի հանդիսանում ոչ մի ընկերության դուստր կամ կախյալ ընկերություն, ինչպես նաև չունի դուստր կամ կախյալ ընկերություն:

Սույն պահին հարկ է նշել, որ կազմակերպության բաժնետերերը ունեն բաժնեմասեր հետևյալ կազմակերպություններում՝

- «ՍՍ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ
- «Էկոմիքս» ՍՊԸ:
- «Լույսեր» ՓԲԸ:
- «Դ և Ս ՔՈՆՍԹՐԱԶՇՆ» ՍՊԸ:

3.6. Թողարկողի հիմնական միջոցները

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, Ընկերության հիմնական միջոցների զուտ հաշվեկշռային արժեքը կազմում է շուրջ 3,029 մլն ՀՀ դրամ, որը աճել է 2023 թվականի 2,587 մլն ՀՀ դրամ և 2022 թվականի 1,379 մլն ՀՀ դրամ ցուցանիշների համեմատ: Տարեկան հատվածով հիմնական միջոցների բաժանման ամփոփագիրը ներկայացված է ստորև.

Հիմնական միջոցներ (հազար ՀՀ դրամ)	Զուտ հաշվեկշռային արժեքը առ 31/12/2024թ.	Զուտ հաշվեկշռային արժեքը առ 31/12/2023թ.	Զուտ հաշվեկշռային արժեքը առ 31/12/2022թ.
Հող	417,500	417,500	417,500
Կառուցվածքներ	49,034	8,442	8,442
Մեքենասարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ	2,650,733	2,156,117	964,144
Անավարտ շինարարություն	397,850	205,467	1,046
Ընդամենը	3,515,117	2,787,526	1,391,132

Ընկերության հիմնական միջոցների գերակշիռ մասը կազմում են արտադրատնտեսական սարքավորումները՝ այդ թվում ծանր տեխնիկա (էքսկավատորներ, բետոնախառնիչներ, բետոնապոմպեր, ինքնաթափ բեռնատարներ), Liebherr LCM 3.0 բետոնի արտադրության գործարանը, էլեկտրամատակարարման համակարգեր և տեխնիկական ենթակառուցվածքներ: 2022-2023 թվականներին իրականացվել են նաև ներդրումներ՝ արևային կայանի (98.28 կՎտ) տեղադրման, էլեկտրոնային ավտոմոբիլային կշեռքի և սենդվիչ պանելներով անգարի կառուցման ուղղությամբ:

Արտադրական գույքը գեր ժամանակակից է և լիովին նոր է՝ 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ արտադրական հիմնական միջոցների միջին տարիքը կազմում է 1.2 տարի:

Ընկերությանը պատկանում է 2.18 հա մակերեսով հողատարածք, որը գտնվում է Երևանի Աջափնյակ վարչական շրջանում և հանդիսանում է հիմնական արտադրական բազայի տեղակայման վայր: Նշված հողատարածքը ձեռք է բերվել 2022 թվականին շուրջ 400 մլն ՀՀ դրամով:

Համակարգչային տեխնիկայի կազմում ընդգրկված են աշխատանքային համակարգիչներ, մոնիտորներ, տպիչներ, անխափան սնուցման սարքեր (UPS), ցանցային սվիչեր և այլ SS համակարգեր, որոնք ծառայում են ընկերության օպերացիոն և վարչական գործունեությանը:

Ընկերության ղեկավարությունը ներկայումս չի կանխատեսում որևէ փոփոխություն, որը կարող է էականորեն սահմանափակել ընկերության կողմից իր հիմնական միջոցների օգտագործումը կամ դրանց գործառնական նշանակությունը:

3.7. Զարգացման վերջին միտումները

Թողարկող-ի կողմից արտադրանքի և ծառայությունների իրացման ծավալները վերջին երեք տարիներին աճել են շեշտակի: 2022 թվականին իրացման հասույթը կազմել է շուրջ 35 մլն ՀՀ դրամ, 2023 թվականին՝ արդեն 2.04 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2024 թվականին՝ 3.48 մլրդ ՀՀ դրամ: Այս աճը պայմանավորված է եղել ինչպես բետոնի արտադրության ծավալների մեծացմամբ, այնպես էլ շինարարական տեխնիկայի վարձակալության ծառայությունների ընդլայնմամբ:


Չնայած 2024 թվականին ընկերությունը չի ապահովել գուտ շահույթ (ձևավորվել է մոտ 3 մլն ՀՀ դրամ վնաս), հիմնական գործունեությունը մնացել է շահութաբեր՝ արձանագրելով շուրջ 200 մլն ՀՀ դրամ գործառնական շահույթ: Նշվածը վկայում է, որ ընկերության հիմնական եկամտային մոդելն արդյունավետ է և կարողանում է պահպանել կայունություն՝ նույնիսկ ֆինանսական ճնշումների պարագայում:

Ընկերությունը նաև շարունակել է ակտիվ ներդրումային գործունեությունը՝ 2024 թվականին բազային ակտիվների ձեռքբերման և ֆինանսական փոխանցումների համար ուղղելով շուրջ 139 մլն ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ, գործառնական դրամական հոսքերը մնացել են դրական՝ կազմելով 183 մլն ՀՀ դրամ, իսկ տարվա վերջում դրամական մնացորդը կազմել է 157.6 մլն ՀՀ դրամ:

3.8. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.8.1. Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը

Թողարկողի կանոնադրության համաձայն սահմանվել է հետևյալ կառավարման կառուցվածքը.



Կազմակերպության կառավարման մարմիններն են.

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը:
- Խորհուրդը
- Տնօրենը:

Կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է:

3.8.2. Կառավարման մարմինների իրավասությունները

3.8.2.1. Բաժնետերերի ընդհանուր ժողով

Բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետև՝ ժողովի) իրավասություններն են՝

1. Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
2. Ընկերության վերակազմակերպումը.
3. Ընկերության լուծարումը.
4. լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ, ամփոփիչ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը.
5. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
6. խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
7. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման,

ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

8. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.
9. բաժնետոմսերի համախմբումը կամ բաժանումը.
10. Ընկերության միանձնյա գործադիր մարմնի ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
11. Ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
12. հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
13. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
14. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, ինչպես նաև տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
15. Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի անդամների, գործադիր տնօրենի և վերստուգողի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
16. Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
17. Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը.
18. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ որոշումների ընդունումը:

3.8.2.2. Խորհուրդ

Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից: Խորհրդի անդամների քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող պակաս լինել 3 (երեք) հոգուց:

Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

19. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
20. տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, ժողովների օրակարգի հաստատումը.
21. ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը.
22. Ընկերության կանոնադրության 46-րդ կետի 1), 2), 3), 4), 5), 7), 8), 9), 15), 16), և 17) ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովի քննարկմանը.
23. գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.
24. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը, պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.
25. Ընկերության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.
26. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատմանը վերաբերող առաջարկությունների ներկայացումը ժողովին և նրա վճարման չափի սահմանումը.

27. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
28. Ընկերության բաժնետոմսերով վճարվող միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
29. տնօրենների խորհրդի նախագահի և տեղակալի ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
30. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
31. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին այն փաստաթղթերի հաստատումը, որոնք վերապահված չեն բաժնետերերի ժողովի կամ գործադիր մարմնի իրավասությանը.
32. Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների ստեղծումը և այլ կազմակերպություններին մասնակցելու վերաբերյալ որոշումների ընդունումը.
33. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում գործարքների կնքումը կամ հաստատումը.
34. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի, ինչպես նաև Ընկերության հաստիքացուցակի հաստատումը հաստատումը.
35. Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի հիմնադրումը (ստեղծումը), նրանց կանոնների (կանոնադրության) հաստատումը,
36. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

3.8.2.3. *Տնօրեն*

Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Կազմակերպության միանձնյա գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ ժողովի իրավասություն հանդիսացող հարցերի: Կազմակերպության տնօրենը՝

1. տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
2. առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից.
3. ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
4. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային.
5. տալիս է լիազորագրեր.
6. բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.
7. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում, իսկ խորհուրդ ստեղծված չլինելու դեպքում՝ հաստատում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը և այլ ներքին իրավական ակտերը.
8. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
9. օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին (այդ թվում՝ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին), ինչպես նաև աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
10. սահմանում է Ընկերության աշխատակիցների (այդ թվում՝ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների) աշխատավարձը, աշխատանքային պայմանները, ներառյալ՝ նպատակային առաջադրանքները և խրախուսման համակարգերը:

3.8.3. *Թողարկողի կառավարման մարմինների անդամները*

Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմը ստորև բերված է աղյուսակում.

Անունը, ազգանունը/ Կազմակերպության անվանումը	Բնակության վայրը/ Գրանցման հասցեն	Զբաղեցրած պաշտոնը	Թողարկողի կազմից դուրս գործունեությունը
Իսրայելյան Սարգիս Համլետի	ՀՀ, ք. Երևան	Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահ	Տնտեսագիտության թեկնածու: «ՍՍ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ (ներդրումային ֆոնդերի կառավարիչ) բաժնետեր, տնօրեն, «Լույսեր» ՓԲԸ բաժնետեր
Խաչիկ Մարտունի Սահակյան	ՀՀ, ք. Երևան	Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասնակից	Տնտեսագետ. «Էկոմիքս» ՍՊԸ ընկերության 50% բաժնետեր, կոնմեքցիոն տնօրենն է.
Դավիթ Սամվելի Քոչարյան	ՀՀ, ք. Երևան	Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասնակից	Ինժեներ-շինարար է. «Դ և Ս ՔՈՆՍԹՐԱԶՇՆ» ՍՊԸ ընկերության 100% բաժնետեր, տնօրեն.
Սամվել Արշալույսի Մարգարյան	ՀՀ, ք. Երևան	Բաժնետերերի ընդհանուր ժողովի քարտուղար	Տնտեսագիտության թեկնածու: «ՍՍ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ (ներդրումային ֆոնդերի կառավարիչ) բաժնետեր. ակտիվների կառավարիչ.
Դավիթ Արշալույսի Մարգարյան	ՀՀ, ք. Երևան	Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասնակից	Գրաֆիկ դիզայներ. «Լույսեր» ՓԲԸ բաժնետեր

Թողարկողի Խորհրդի կազմը ստորև բերված է աղյուսակում.

Խորհրդի Անդամ	Պաշտոնը
Իսրայելյան Սարգիս Համլետի	Խորհրդի նախագահ
Մարգարյան Սամվել Արշալույսի	Խորհրդի նախագահի տեղակալ
Մարգարյան Դավիթ Արշալույսի	Խորհրդի անդամ
Քոչարյան Դավիթ Սամվելի	Խորհրդի անդամ
Սահակյան Խաչիկ Մարտունի	Խորհրդի անդամ

Թաղարկողի գործադիր մարմնի կազմը ներկայացված է ստորև.

Անունը, ազգանունը	Բնակության վայրը/ Գրանցման հասցեն	Զբաղեցրած պաշտոնը	Փորձառությունը
Ղևոնդ Գրիգորի Աբրահամյան	ՀՀ, ք. Երևան	Տնօրեն	2022թ. սեպտեմբերից աշխատում է «ՀՄԿԱ» ՓԲԸ-ում՝ որպես արտադրամասի պետ, 2024թ. օգոստոսից՝ տնօրենի առաջին

			տեղակալ, իսկ 2025թ. ապրիլից տնօրեն:
--	--	--	-------------------------------------

Ընկերության կառավարման մարմինների իրավասությունները մանրամասն ներկայացված են Ազդագրի 3.8.2. կետով:

3.8.4. Շահերի բախումը

Կազմակերպության և Կազմակերպության կառավարման մարմինների անդամների միջև շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև բացահայտված չէ:

3.9. Կառավարման մարմինների գործունեությունը

3.9.1. Թողարկողի աուդիտի կոմիտեն

Ընկերությունում աուդիտի կոմիտե առկա չէ, սակայն կանոնադրությամբ սահմանված է վերստուգողի առկայության անհրաժեշտություն: Վերստուգողը հսկողություն է իրականացնում Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ: Նա հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և կանոնադրությանը:

3.9.2. Կորպորատիվ կառավարման սկզբունքները

Թողարկողը ներկայումս մասամբ է համապատասխանում կորպորատիվ կառավարման վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգավորումների պահանջներին, սակայն միջոցներ են ձեռնարկվում՝ այդ պահանջներին լիարժեք համապատասխան կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրումն ապահովելու համար:

3.10. Հսկող անձինք

Թողարկողի հսկող անձինք են՝

Կանոնադրական կապիտալում մասնակցության ուժով	Կնքված լիզինգի պայմանագրի համաձայն՝
Սարգիս Համլետի Իսրաելյան Խաչիկ Մարտունի Սահակյան Դավիթ Սամվելի Քոչարյան	ԱԿԲԱ Լիզինգ ՎԿ ՓԲԸ Թվով 26 ֆինանսական լիզինգի պայմանագրեր

3.11. Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

3.11.1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Կազմակերպության 2022, 2023, և 2024 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորական եզրակացություններով, ներառված են Ազդագրում՝ Հավելված 5 - ում: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները

ներդրողների համար հասանելի են Կազմակերպության գրասենյակում, ինչպես նաև պաշտոնական ինտերնետային կայքում:

3.11.2. Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2024 թվականի դեկտեմբերի 31 - ից մինչև ՀՀ ԿԲ-ի կողմից Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

3.11.3. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Կազմակերպությունը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և վարչական իրավական վարույթների մեջ, որոնք Թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ էական ազդեցություն:

3.12. Լրացուցիչ տեղեկատվություն

3.12.1. Կանոնադրական կապիտալը

3.12.1.1. Կանոնադրական կապիտալի մեծությունը

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 1,781,624,700 (մեկ միլիարդ յոթ հարյուր ութսունմեկ միլիոն վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ առ 23.12.2024թ:

3.12.1.2. Թողարկված բաժնետոմսերի (բաժնեմասերի) քանակը

Կազմակերպության կողմից հայտարարված բաժնետոմսերի քանակը կազմում է 43,100 (քառասուներեք հազար հարյուր) սովորական բաժնետոմս, որոնք ամբողջությամբ թողարկված և լիարժեք վճարված են: Յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 41,337 (քառասունմեկ հազար երեք հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ:

Թողարկողի կանոնադրական կապիտալը բաժանված է 5 մասնակիցների միջև ստորև ներկայացված մասնաբաժիններով.

Մասնակիցը	Բաժնեմասը (ՀՀ դրամ)	Բաժնեմասի չափը (%)
Սարգիս Համլետի Իսրաելյան	445,406,175	25%
Խաչիկ Մարտունի Սահակյան	445,406,175	25%
Դավիթ Սամվելի Քոչարյան	445,406,175	25%
Սամվել Արշալույսի Մարգարյան	231,611,211	13%
Դավիթ Արշալույսի Մարգարյան	213,794,964	12%

3.12.2. Կանոնադրությունը

Ընկերությունը, համաձայն կանոնադրության 5. կետի կարող է իրականացնել Ընկերությունը կարող է իրականացնել ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած

ձեռնարկատիրական ու տնտեսական գործունեություն, այդ թվում (բայց ոչ միայն)՝ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի գործադիր կառավարման գործունեություն: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Շնկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

Կանոնադրության 18. կետի համաձայն Շնկերությունն կարող է թողարկել և տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր, մուրհակներ, անանցյալ գործիքներ և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր:

3.13. Էական պայմանագրեր

Կազմակերպությունում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 2 տարվա ընթացքում Կազմակերպության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Կազմակերպության վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

3.14. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն ներկայացվող Ազդագրում չի օգտագործվել:

Բացի Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Որպես սույն բաժնում ներկայացված տեղեկատվության ստացման աղբյուր, երրորդ անձինք ներգրավված չեն:

3.15. Այլ տեղեկատվություն

3.15.1. *Տվյալների հասանելիություն*

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Կազմակերպության կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.hska.am հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Կազմակերպության գլխամասային գրասենյակ՝ 0042, ք. Երևան, Լենինգրադյան փ. 31, բն. 12:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԵՐԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:

ՄԱՍ 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

4.1. ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև/ իրավաբանական անձ/

**«ՀՄԿԱ» ՓԲ Ընկերության թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի
ձեռքբերման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև**
(իրավաբանական անձանց համար)

Թողարկող Issuer	
Թողարկման արժույթը Currency of denomination	
Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը Total number of issued bonds	
Թողարկվող պարտատոմսերի ԱՄՏԾ ISIN of issued bonds:	
Արժեկտրոնային եկամտաբերությունը Coupon yield	
Մեկ պարտատոմսի ձեռքբերման գինը Price per unit	
Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը Number of purchasing bonds	
Գործարքի ծավալը (ՀՀ դրամ) Transaction volume (AMD)	

Ներդրողի վերաբերյալ տեղեկություններ Investor Information

Իրավաբանական անձի անվանումը Company name	
Գրանցման տվյալներ Registration details	

Իրավաբանական հասցեն Legal address	
ՀՎՀՀ Tax Code	
Կապի միջոցները (հեռ., էլ. փոստ) Contact details (tel., e-mail)	
Արժեթղթերի հաշվի տվյալները Securities account details	
Բանկային տվյալները Bank details	ՀՀ դրամ/ AMD ԱՄՆ դոլար/USD
Իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն ազգանունը, պաշտոնը Full name, position of the authorized person of legal entities	

անուն ազգանուն / full name

օր, ամիս, տարեթիվ / day, month, year

ստորագրություն / signature

Լրացվում է տեղաբաշխողի լիազորված աշխատակցի կողմից
For use by the authorized employee of the underwriter

Հայտի ստացման ամսաթիվ
Receive date

օր, ամիս, տարեթիվ / day, month, year

ժամ, րոպե / hour, minute

Վճարման ամսաթիվ
Payment date

օր, ամիս, տարեթիվ / day, month, year

Լիազորված աշխատակից
Authorized employee

անուն ազգանուն / full name

ստորագրություն /
signature

Սույնով, հավաստում եմ, որ ձեռքբերման հայտը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող «ՀՄԿԱ» ՓԲԸ պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:/

We hereby acknowledge that before submitting this subscription order we have reviewed the Prospectus of the public offering of bonds of HSKA CJSC, which forms an integral part of this order. We hereby accept and agree to the terms and conditions thereof and assume the responsibilities and possible risks of investing in these bonds.

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են պարտատոմսերի գնման նպատակով ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու հետ: /

We confirm that the funds transferred for the purposes of buying the bonds have been acquired in a lawful manner and are in no way linked to terrorism financing, drug trafficking, human trafficking, and tax evasion.

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և «Լույսեր» ՓԲԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «ՀՄԿԱ» ՓԲԸ թողարկած պարտատոմսերի՝ մեր կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ: /

We agree that in case this order is satisfied, it shall constitute a properly executed and valid contract between us and HSKA CJSC on our acquisition (purchase) of bonds issued by Luyser CJSC.

ԾԱՆՈԹՑՈՒՄ: ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՉԵՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ: /

NOTIFICATION: THE INVESTMENTS IN THESE SECURITIES ARE NOT GUARANTEED BY THE MEANS OF THE DEPOSIT GUARANTEE FUND.

4.2. ՀԱՎԵԼՎԱԾ 2: Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/

**«ՀՄԿԱ» ՓԲ Ընկերության թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի
ձեռքբերման հայտ-հանձնարարականի օրինակելի ձև
(ֆիզիկական անձանց համար)**

Ներդրողի վերաբերյալ տեղեկություններ

Թողարկող Issuer	
Թողարկման արժույթը Currency of denomination	
Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը Total number of issued bonds	
Թողարկվող պարտատոմսերի ԱՄՏՕ ISIN of issued bonds:	
Արժեկտրոնային եկամտաբերությունը Coupon yield	
Մեկ պարտատոմսի ձեռքբերման գինը Price per unit	
Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը Number of purchasing bonds	
Գործարքի ծավալը (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար) Transaction volume (AMD/USD)	
Investor Information	
Անուն, ազգանուն Full name	
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ ID details	
Բնակության հասցեն Residence address	

Կապի միջոցները (հեռ., էլ. փոստ) Contact details (tel., e-mail)	
Արժեթղթերի հաշվի տվյալները Securities account details	
Բանկային տվյալները Bank details	ՀՀ դրամ/ AMD ԱՄՆ դոլար/USD

անուն ազգանուն / full name օր, ամիս, տարեթիվ /day, month, year ստորագրություն / signature

Լրացվում է տեղաբաշխողի լիազորված աշխատակցի կողմից
For use by the authorized employee of the underwriter

Հայտի ստացման ամսաթիվ
Receive date

օր, ամիս, տարեթիվ / day, month, year

ժամ, րոպե / hour, minute

Վճարման ամսաթիվ
Payment date

օր, ամիս, տարեթիվ / day, month, year

Լիազորված աշխատակից
Authorized employee

անուն ազգանուն / full name

ստորագրություն /
signature

Սույնով, հավաստում եմ, որ ձեռքբերման հայտը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող «ՀՄԿԱ» ՓԲԸ պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

We hereby acknowledge that before submitting this subscription order we have reviewed the Prospectus of the public offering of bonds of HSKA CJSC, which forms an integral part of this order. We hereby accept and agree to the terms and conditions thereof and assume the responsibilities and possible risks of investing in these bonds.

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են պարտատոմսերի գնման նպատակով ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու հետ: /

We confirm that the funds transferred for the purposes of buying the bonds have been acquired in a lawful manner and are in no way linked to terrorism financing, drug trafficking, human trafficking, and tax evasion.

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականի բավարարման դեպքում հայտ-հանձնարարականը կհանդիսանա մեր և «ՀՄԿԱ» ՓԲԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ «ՀՄԿԱ» ՓԲԸ թողարկած պարտատոմսերի՝ մեր կողմից ձեռքբերման (առքի) վերաբերյալ: /

We agree that in case this order is satisfied, it shall constitute a properly executed and valid contract between us and HSKA CJSC on our acquisition (purchase) of bonds issued by HSKA CJSC.

ԾԱՆՈԹՑՈՒՄ: ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՉԵՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԻՋՈՑՆԵՐՈՎ: /

NOTIFICATION: THE INVESTMENTS IN THESE SECURITIES ARE NOT GUARANTEED BY THE MEANS OF THE DEPOSIT GUARANTEE FUND.

4.3. ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն

Ակտիվների շահութաբերություն (ROA) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ

Կապիտալի համարժեքության գործակից = Սեփական կապիտալ / Ընդհանուր ակտիվներ

Ֆինանսական կախվածության գործակից = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ

Բացարձակ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընթացիկ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընդհանուր իրացվելիության գործակից = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)

Պաշարների շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը

Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը)

4.4. ՀԱՎԵԼՎԱԾ 4: Թողարկման պայմաններ

..... 202_թ.

ՀՄԿԱ ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ազդագիրը (գրանցված է _____ 202_թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ԱՐՄԲԸՈՎ ԲԲԸ-ում՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 39 հասցեում և ՀՄԿԱ ՓԲԸ-ում՝ ՀՀ, ք. Երևան 0042, Լենինգրադյան փ. 31, բն. 12:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ՀՄԿԱ» ՓԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր
3.	Մերիան (տվյալ ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	ենթակա է որոշման Թողարկողի Խորհուրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին: Մանրամասները ներկայացված են Ազդագրի 2.3.6. կետում:
6.	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար կամ ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը	Պարտատոմսի գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց որոշվելու է հետևյալ բանաձևով.

		$P = \frac{C}{f} \sum_{i=1}^N \left[\frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} \right] + \left[\frac{A}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}} \right]$ $\tau = \frac{DSN}{DCC}$ որտեղ՝ DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի/անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է: DCC - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է: P - պարտատոմսի գինն է: f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=2 կիսամյակային վճարումների դեպքում): N - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է: Y - պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է: C - տարեկան արժեկտրոնի չափն է: A - պարտատոմսի անվանական արժեքն է: i - արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում i արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ից մինչև N արժեքները (երբ N-ը ընդունում է 1 արժեք, i և նույնպես ընդունում է 1 արժեք): Օրերի հաշվարկման պայմանականությունն է՝ փաստացի/փաստացի. DCC=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 – D1M1Y1 DSN=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 – D2M2Y2 որտեղ՝ D1M1Y1 - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է, D2M2Y2 - գործարքի կատարման ամսաթիվն է, D3M3Y3 - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:
--	--	---

		Տեղաբաշխման ժամկետի ընթացքում թողարկվող պարտատոմսերի գները Տեղաբաշխումը սկսելուց առաջ լրացուցիչ կիրառարակվեն Թողարկողի և/կամ Տեղաբաշխողի ինտերնետային կայքերում:
8.	Անվանական արժեքը	100 (հարյուր) ԱՄՆ դոլար կամ 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ
9.	Քանակը	Թողարկման ծավալին և անվանական արժեքին համապատասխան
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Էնթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Էնթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	-----
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Էնթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Արժեկտրոնի տոկոսադրույքը Էնթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Վճարման պարբերականությունը 6 ամիս է տեղաբաշխման սկզբից:
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Էնթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	Էնթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	էնթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչակտրոնային) արժեթղթերի վերաբերյալ դրույք (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման ժամկետը	էնթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
22.	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 (հարյուր) ԱՄՆ դոլար կամ 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«ԱՐՄԲՐՈՎ» ԲԲԸ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 39
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	էնթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկզբի ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության	արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի

	առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հարցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրի թույլտվություն ստանալու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում (բացառությամբ անհատույց գործարքների): Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲ ընկերությունը: Բորսայում պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվության հայտի մերժման դեպքում, տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:
30.	Արժեթղթի վարկանիշը	արժեթղթերի վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Մանրամասները ներկայացված են Ազդագրի 2.4.1. կետում:

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Սարգիս Բսրաեյան	Բաժնետեր, Խորհրդի անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Մարգարյան	Բաժնետեր, Խորհրդի անդամ		

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սամվել Մարգարյան (անուն, ազգանուն)	Բաժնետեր, Խորհրդի անդամ (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Քոչարյան (անուն, ազգանուն)	Բաժնետեր, Խորհրդի անդամ (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ղևոնդ Աբրահամյան (անուն, ազգանուն)	Տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Մայիլյան (անուն, ազգանուն)	Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են՝

Ղևոնդ Աբրահամյան (անուն, ազգանուն)	Տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
---	--------------------	------------------	-----------

4.5. ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկողի 2022, 2023, և 2024 թթ-ի ֆինանսական հաշվետվություններ և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն «ՀՍԿԱ» ՓԲԸ 31 դեկտեմբերի 2024թ.	
--	--

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՀԱԿԱ» ՓԲԸ-ի բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱԿԱ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների կից ձևադրագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական ըաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտի անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնադրի» (ՀՀՄՄ կանոնադրի) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀՀՄՄ կանոնադրի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խաղաղության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվավերացվող որևէ իրատեսական այլընտրանք:

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigori Lusakovich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևանի Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգորյան Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

Կառավարման օղակներում գտնվող անձից պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խաղաղության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի նշաշխատում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, եթե այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խաղաղության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, եթե խեղաթյուրումն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կապիտալը: Ի՝ լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խաղաղության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խաղաղության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խաղաղությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնալից բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտի վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված ըաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խեղաթյուրումները:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուղղորդություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր եզրակացության ամսաթվով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և թույլատրելիությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջարկների պատկերով շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի բերությունների մասին:

Ալմին Հուլիանիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Նարինե Ամենյան, FCCA

Մուսաբաջյանի պատասխանատու

25 հունիսի 2025թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Հատույթ հաճախորդների հետ պայմանագրերից	5	3,478,324	2,042,149
Վաճառքի ինքնարժեք	6	(3,107,940)	(1,783,027)
Համախառն շահույթ		370,384	259,122
Այլ եկամուտ	7	51,296	65,806
Իրացման ծախսեր	8	(33,239)	(17,747)
Վարչական ծախսեր	9	(140,608)	(52,981)
Այլ ծախսեր		(46,108)	(733)
Գործառնական գործունեությունից շահույթ		201,725	253,467
Ֆինանսական եկամուտ		1,591	4,116
Ֆինանսական ծախսեր		(188,330)	(206,402)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ		2	1,411
Շահույթ մինչև հարկերը		14,988	52,592
Շահութահարկի գծով ծախս	10	(18,076)	(14,035)
Տարվա շահույթ (վնաս)		(3,088)	38,557
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(3,088)	38,557

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների թաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	3,029,441	2,586,622
Ոչ նյութական ակտիվներ		2,315	2,459
Հետաձգված հարկային ակտիվներ	10	9,743	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		26,349	29,284
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		3,067,848	2,618,365
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	13	29,123	47,060
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	664,048	375,796
Տրամադրված փոխառություններ	15	57,000	20,175
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		157,622	45,911
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		907,793	488,942
Ընդամենը ակտիվներ		3,975,641	3,107,307

Ֆինանսական վիճակի մասին
հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Կապիտալ և պահուստներ	16	
Բաժնետիրական կապիտալ	1,781,621	979,683
Կուտակված վնաս	(12,088)	(9,000)
Ընդամենը սեփական կապիտալ	1,769,533	970,683
Պարտավորություններ		
Ոչ ընթացիկ		
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	17	766,356
Ակտիվներին վերաբերող շնորհներ	18	285,414
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	1,051,770	1,357,383
Ընթացիկ		
Երկարաժամկետ վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մաս	17	739,522
Հետմնված եկամուտ		178,637
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	19	217,558
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		18,621
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	1,154,338	779,241
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	3,975,641	3,107,307

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հունիսի 25-ին:



Հարություն Մայիլյան
«Նեքսիա Արմենիա» ՓԲԸ-ի լիազոր
ներկայացուցիչ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների քաղաքացույցի մասը կազմող 10-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների
մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե- Տիրական կապիտալ	Չգրանցված կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	417,500	-	(47,557)	369,943
Տարվա շահույթ	-	-	38,557	38,557
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	38,557	38,557
Թողարկված բաժնետիրական կապիտալ	400,973	161,210	-	562,183
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	400,973	161,210	-	562,183
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	818,473	161,210	(9,000)	970,683
Տարվա վնաս	-	-	(3,088)	(3,088)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(3,088)	(3,088)
Թողարկված բաժնետիրական կապիտալ	562,183	239,755	-	801,938
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	562,183	239,755	-	801,938
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,380,656	400,965	(12,088)	1,769,533

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների քաղաքացույցի մասը կազմող 10-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Հաճախորդներից մուտքեր	3,915,656	2,263,984
Վճարումներ մատակարարներին	(3,368,947)	(1,832,700)
Աշխատավարձ և այլ վճարումներ աշխատակիցներին	(150,383)	(35,333)
Վճարված հարկեր և տուրքեր	(216,041)	(69,462)
Ստացված շնորհներից եկամուտ	4,635	-
Այլ գործառնական ելքեր	(1,711)	(1,106)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	183,209	325,383
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Վճարումներ հիմնական միջոցների ձեռքբերման համար	(102,475)	(489,804)
Տրամադրված փոխառություններ	(57,000)	(20,300)
Փոխառությունների վերադարձ	20,175	125
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(139,300)	(509,979)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկումից մուտքեր	801,938	562,183
Վարկերից և փոխառություններից մուտքեր	-	30,000
Վարկերի և փոխառությունների մայր գումարի մարում	(659,673)	(267,149)
Լիզինգային պայմանագրերի գծով նախավարձի վճարում	-	(50,422)
Վարկերի տոկոսների մարում	(76,071)	(63,621)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	66,194	210,991
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	110,103	26,395
Դրամական միջոցների և դրանց համարժեքներից ստացված տոկոսային եկամուտ	1,591	4,116
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	17	(12)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	45,911	15,412
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	157,622	45,911

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«ՀՄԻՆ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբերի 2024թ.

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«ՀՄԻՆ» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«ՀԱՄԿ» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերության) հիմնական գործնությունն է բետոնի արտադրությունը և շինարարական տեխնիկայի վարձակալությունը: Ընկերությունն իրականացնում է տնտեսական գործունեություն շինարարության ոլորտում՝ մասնագիտանալով բետոնի արտադրության և շինարարական տեխնիկայի վարձակալության ծառայությունների մատուցման մեջ: Ընկերության բետոնն արտադրվում է գերմանական «Լիբնեռ» ընկերության բետոնի հանգույցով, որն ունի որակի վերահսկման ավտոմատացրած համակարգ և ներկայումս հանդիսանում է Հայաստանի ամենամեծ արտադրողականությամբ բետոնային հանգույցը: Բացի հիմնական արտադրական գործունեությունից, Ընկերությունը տրամադրում է նաև շինությունների վարձակալություն՝ ներառյալ սեփական ավտոպարկ և փորձառու մասնագետների ներգրավմամբ:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՄ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«ՀԱՄԿ» ՓԲԸ-ն գրանցվել է ՀՀ օրենսդրությանը համապատասխան 2022թ. մայիսի 10-ին:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 34 մարդ (2023թ.՝ 5 մարդ):

Ընկերության գրանցման հասցեն է ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան փ. շենք 31/12:

Համապատասխանություն և անընդհատություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄՀ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ռոջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բավական է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կանխավորությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրոշմով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

ՀՀ ԿԸՀ Հայաստանի կառավարության հետ համատեղ կարողացավ զսպել գնաճը, սակայն դա դժվարություններ ստեղծեց արտահանողների և արտադրության պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգիայի աճող գները ճնշում են գործարարում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում են շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը

ներկարժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի այդ ռիսկերը արդյունավետորեն կառավարելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄՀ) և ՀՀՄՄՀ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Ներդրողիշաղ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ և կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ» (ՀՀՄՄ 1 փոփոխություններ),
- «Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հեղադարձ վարձակալությամբ գործարքներում» (ՖՀՄՄ 16 փոփոխություններ),
- «Մարտակարգման շրջայի ֆինանսավորման մեխանիզմներ» (ՀՀՄՄ 7 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ),

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄՀ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմանը այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՄ 21 փոփոխություն)
- «Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում» (ՖՀՄՄ 9 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՄ 18 «Ֆինանսական հաշվեգրվածությունների ներկայացում և բացահայտում»
- ՖՀՄՄ 19 «Դուրս գրող ձեռնարկություններ առանց հանրային հաշվեգրողականության, բացահայտումներ»

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորուստի սպառնալիքը և անբարեխափաս ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անսառային հողմերը, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և նրաշաղկ:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ գոյական արտախտումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չնդգնացման կամ հարմարվելու ծախսերի հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

Ընկերությունը գիտակցում է հետագա ջանքերի անհրաժեշտությունը՝ կլիմայական գործոնները Ընկերության ռիսկերի կառավարման գնահատականներում և արձանագրություններում ամբողջությամբ ինտեգրելու գործում:

4.3 Արտաբյուջե

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կորացված է միևնույն մոտակա հազար միավորը:

Արտաբյուջով գործարքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Ցուղաբանյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտաբյուջով գրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	413.89	447.90

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

Արտաբյուջով գործարքներից, ինչպես նաև արտաբյուջով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

4.4 Հասույթ

Հասույթը ձևակերպվում է հիմնականում արտադրված բեռտի վաճառքից և շինարարական ծառայությունների մատուցումից:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը քավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չքավարարված կատարման պարտականությունների համար ստացված հասուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը քավարարում է կատարման պարտականությունը միջև հասուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հասուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Արտադրված բեռտի վաճառքից հասույթ

Արտադրանքի վաճառքից հասույթը ճանաչվում է ժամանակի մեջ որևէ պահի՝ ապրանքի սեփականության հետ կապված էական ռիսկերը և սեփականությունից ստացվող օգուտները հաճախորդին փոխանցելուց հետո:

Շինարարական ծառայությունների մատուցումից հասույթ

Ընկերությունը մատուցում է շինարարական տեխնիկայի վարձակալության և սպասարկման ծառայություններ:

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում, երբ ծառայությունները կատարվում են:

4.5 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Այգնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ապօգնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ

պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածություն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գնային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ	- 20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ	- 8-15 տարի
Տնտեսական գույք	- 8 տարի

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

Արժեզրկում

Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և համեմատման փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կրոստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխառուցվող գումարը:

Փոխառուցվող գումարը վաճառքի գույք գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամատեղծ միավորի փոխառուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամատեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխառուցվող գումարը: Արժեզրկումից կրոստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս:

Երբ հետազայում արժեզրկումից կրոստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամատեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխառուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամատեղծ միավորի գծով արժեզրկումից կրոստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կրոստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

4.6 Ֆինանսական գործիքներ

Հանաչում և ապահովում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Շնկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապահովանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապահովանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական քաղաքիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվներին առեվտրոնկալում են ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ արտադրության փոխադրության տարբերությունից արդյունքում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի

արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Շնկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 12.1-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվարկվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն ռիզիկո մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հավսարանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսարդյունքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գնեցման ազդեցությունն անշառն է, գնեցում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Շնկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և տրված փոխառությունները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կրոստները ճանաչվելու համար ՖՀՄ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առեվտրոնկալություն՝ «Ակնկալվող պարտքային կրոստների մոդելը»: ՖՀՄ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված փոխառությունները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄ 15-ի համաձայն, դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Պարտքային ռիսկի գնահատման և ակնկալվող պարտքային կրոստները չափելիս Շնկերությունը դիտարկում է ավելի ընդլայնված տեղեկատվություն ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խեղամիտ և իմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Ակնկալվող պարտքային կրոստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կրոստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Շնկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկային վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Շնկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 12.1-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսարդյունքի մեթոդով:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.7 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վճարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև, դրանք՝ իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

4.8 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հնկերոջունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Հնկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխառուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Հնկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսմանը կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Շուկայականից ցածր տոկոսադրույքով պետական փոխառությունից օգուտը դիտվում է որպես պետական շնորհ: Կարելի ճանաչվում և չափվում է իրական արժեքով՝ համաձայն ՀՀՀՄՄ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի: Շուկայականից ցածր տոկոսադրույքից օգուտը չափվում է որպես փոխառության՝ ՀՀՀՄՄ 9-ի համաձայն որոշված սկզբնական հաշվեկշռային արժեքի և ստացված մուտքերի տարբերություն: Օգուտը հաշվառվում է որպես պետական շնորհ: Հետագայում շնորհը ճանաչվում է շահույթում կամ վնասում սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հնկերոջունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխառուցման համար նախատեսված են շնորհները:

4.9 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

4.10 Սեփական կապիտալ, պահուստներ և շահաբաժինների վճարումներ

Հնկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքներն առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

4.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

4.12 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՀՀՀՄՄ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Հնկերության ղեկավարությունը կարծիք գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրույթային ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև, այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Հնկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են նակարհեն տարբերվել:

Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներ

Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը հաշվարկելու համար Հնկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան: Պահուստի դրույքաչափերը հաշվարկվում են՝ հիմնվելով հաճախորդների տարբեր սեգմենտների խմբավորումներից առաջացած ժամկետանց օրերի վրա, որոնց կորուստի նույնատիպ մոդել ունեն:

Սկզբնապես պահուստի մատրիցան հիմնված է Հնկերության՝ պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների վրա: Հնկերությունը ստուգել է պահուստի մատրիցան՝ պատմական պարտքային կորուստի փորձառությունն ապագան կանխատեսող տեղեկության հետ ճշգրտելու համար:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (ադրտահաշված հազար հայկական ՀՀ դրամով)

Տնտեսական պայմանների կանխատեսման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների որոշման վրա աննշան է եղել: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցները թարմացվում են և փոփոխությունները վերլուծվում են ապագան կանխատեսող գնահատականներում:

Պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների, տնտեսական պայմանների կանխատեսման և ակնկալվող պարտքային կորուստների միջև հարաբերակցության գնահատումը նշանակալի է: Ակնկալվող պարտքային կորուստների արժեքը հանգամանքների և կանխատեսվող տնտեսական պայմանների նկատմամբ զգայուն է: Ընկերության պատմական պարտքային կորստի փորձառությունը և տնտեսական պայմանների կանխատեսումը կարող են չարտահայտել համախորդի՝ ապագայում սպասվող պարտքը չմարելու հավանականությունը: Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի վերաբերյալ կոնկրետ դատողությունները և մոտեցումները նկարագրված են Ծանոթագրություն 23.1-ում:

5 Հատույթ

	2024թ.	2023թ.
Ժամանակի մեջ ինչ որ պահին փոխանցվող ապրանքներ		
Արտադրված ինտոնի վաճառքից հատույթ	3,099,572	1,654,676
Ապրանքների վաճառքից հատույթ	44,970	14,094
Ժամանակի ընթացքում փոխանցվող ծառայություններ		
Ծառայությունների մատուցումից հատույթ	333,782	373,379
Ընդամենը հատույթ	3,478,324	2,042,149

6 Վաճառքի ինքնարժեք

	2024թ.	2023թ.
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	2,817,870	1,447,363
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	253,085	324,366
Վաճառված հումքի ինքնարժեք	36,985	11,298
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	3,107,940	1,783,027

7 Այլ եկամուտ

	2024թ.	2023թ.
Ծնորիններից եկամուտ	48,362	61,330
Այլ եկամուտ	2,934	4,476
Ընդամենը այլ եկամուտ	51,296	65,806

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (ադրտահաշված հազար հայկական ՀՀ դրամով)

8 Իրացման ծախսեր

	2024թ.	2023թ.
Փոխհատուցում աշխատակիցներին	30,595	13,394
Մարքեթինգ և գովազդ	2,557	4,309
Այլ	87	44
Ընդամենը իրացման ծախսեր	33,239	17,747

9 Վարչական ծախսեր

	2024թ.	2023թ.
Փոխհատուցում աշխատակիցներին	31,891	245
Առդիտ և խորհրդատվություն	26,400	6,306
Հետազոտական աշխատանքներ	18,740	-
Ապահովագրություն	18,429	31,541
Մաշվածություն և ամորտիզացիա	6,891	1,803
Չփոխհատուցվող հարկեր	3,752	2,921
Այլ	34,505	10,165
Ընդամենը վարչական ծախսեր	140,608	52,981

10 Շահութահարկի գծով ծախս

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	27,300	14,466
Հետաձգված հարկ	(9,224)	(431)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	18,076	14,035

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ միևնույն հարկումը (համաձայն ՖՀՄԱ-ների)	14,988		52,592	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	2,698	0.18	9,467	0.18
(Չհարկվող եկամուտ) չնվազեցվող ծախսեր, զուտ	24,602	1.64	4,999	0.1
Հետաձգված հարկային ակտիվների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	(9,224)	0.62	(431)	(0.01)
Շահութահարկի գծով ծախս	18,076	1.21	14,035	0.27

Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական ՀՀ դրամով)

11 Հիմնական միջոցներ

	Հող	Կառուց- վածքներ	Մեքենա- արքավո- րույններ, տրանսպոր- տային միջոցներ և այլ	Անավարտ շինարա- րություն	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	417,500	8,442	964,144	1,046	1,391,132
Ավելացում	-	-	1,191,973	204,421	1,396,394
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	417,500	8,442	2,156,117	205,467	2,787,526
Ավելացում	-	22,602	491,389	229,091	743,082
Օտարում	-	-	(15,491)	-	(15,491)
Ներքին շարժ	-	17,990	18,718	(36,708)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	417,500	49,034	2,650,733	397,850	3,515,117
Կուտակված մաշվածություն և արժեզրկում					
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	148	11,763	-	11,911
Տարվա հաշվարկ	-	632	188,361	-	188,993
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	780	200,124	-	200,904
Տարվա հաշվարկ	-	973	285,508	-	286,481
Օտարման հետևանքով դրույթում	-	-	(1,709)	-	(1,709)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	1,753	483,923	-	485,676
Հաշվեկշռային արժեք					
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	417,500	7,662	1,955,993	205,467	2,586,622
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	417,500	47,281	2,166,810	397,850	3,029,441

Ավելացումները ներառում են 466,067 հազար դրամ (2023թ.՝ 961,291 հազար դրամ) արժեքով մեքենա-արքավորումներ, որն Ընկերությունը ձեռք է բերել լիզինգային պայմանագրերով:

Ընկերության անշարժ գույքը գրավորված է բանկային վարկերն ապահովելու նպատակով:

Անավարտ շինարարություն իրենից ներկայացնում է կառուցման ընթացքում գտնվող Ընկերության արձմինխտրատիվ շենքի, պահեստի և լսարարատրիայի կապիտալացված աշխատանքների արժեքը: Շինարարությունն իրականացվում է ներդրված հողատարածքի վրա:

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական ՀՀ դրամով)

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Վաճառքի ինքնարժեք	279,413	187,348
Արձմինխտրատիվ ծախսեր	6,874	1,645
Իրացման ծախսեր	199	-
	286,481	188,993

12 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

12.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման ջարդարականությունը և ընդունված մեթոդների մանրամասնները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.6-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	451,916	148,086
Տրված փոխառություններ	57,000	20,175
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	157,622	45,911
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	666,538	214,172

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	1,505,878	1,651,999
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	194,951	97,446
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	1,700,829	1,749,445

13 Պաշարներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Շինանյութ	27,334	41,328
Այլ	1,789	5,732
Ընդամենը պաշարներ	29,123	47,060

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական ՀՀ դրամով)

14 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	496,486	148,086
Ակնկալվող պարտքային կորուստների համար պահուստ	(44,570)	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	451,916	148,086
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	52,917	57,915
Կանխավճարված հարկեր	159,215	169,795
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	212,132	227,710
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	664,048	375,796

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խեղամիտ գնահատում:

Ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 2 ամիս (2023թ.՝ 1 ամիս): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար կորուստի գծով պահուստի մնացորդը համադրվում է տարեկգրի մնացորդի հետ հետևյալ կերպ.

	2024թ.
Կորուստների գծով պահուստը հունվարի 1-ի դրությամբ	-
Տարվա ընթացքում պահուստի աճ	44,570
Կորուստների գծով պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ	44,570

Ծանոթագրություն 23.1-ում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային կորուստների վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

15 Տրամադրված փոխառություններ

Տրամադրված փոխառությունները ներառում են Ընկերության բաժնետիրոջը 50,000 հազար դրամի և միևնույն վերահսկողության տակ գտնվող ընկերությանը 7,000 հազար դրամի անտոկոս և ցլպահանջ փոխառությունները: Փոխառությունները տրամադրվել են հայկական դրամով:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական ՀՀ դրամով)

16 Սեփական կապիտալ

16.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ քան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր	Սովորական բաժնետոմսեր
	2024թ.	2023թ.
Թողարկված և տարվա ընթացքում ամբողջովին վճարված	13,600	9,700
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 41,337 դրամ	33,400	19,800

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի դեռևս չգրանցված 9,700 հատ (2023թ.՝ 3,900 հատ) բաժնետոմս, որոնց դիմաց վճարումներն իրականացվել են, սակայն ավելացումը դեռևս չի գրանցվել ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

17 Վարկեր և փոխառություններ

	Ոչ ընթացիկ		Ընթացիկ	
	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Լիզինգային պայմանագրեր ֆինանսական հաստատություններից	766,356	1,102,125	739,522	425,874
Բաժնետերերից փոխառություններ	-	-	-	94,000
Կապակցված կուլմերից փոխառություններ	-	-	-	30,000
	766,356	1,102,125	739,522	549,874

Լիզինգային պայմանագրերն ունեն 4-5 տարի մարման ժամկետ և տարեկան 10.25-15.5% տոկոսադրույք: Լիզինգային պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը ճանաչել է իրական արժեքով, իսկ տարբերությունը՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցել է որպես ակտիվներին վերաբերվող շնորհ (տն՝ ծանոթագրություն 18-ը):

18 Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	255,258	138,704
Տարվա ընթացքում ստացված	66,072	145,443
Կրեդիտազրկված շահույթի կամ վնասի	(35,916)	(28,889)
Տարեկնից մնացորդ	285,414	255,258

Ընկերությունը «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ից և «Ինկերբանկ» ՓԲԸ-ից ձեռք է բերել մեքենաներ և սարքավորումներ՝ տարեկան 10.50%-15.5% տոկոս ֆինանսավորմամբ: Տոկոսների հիմնական մասը սուբսիդավորվել է «ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից՝ ՀՀ-ում արտադրողականության խթանման նպատակային ծրագրի լիզինգի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում:

Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական ՀՀ դրամով)

Պետության կողմից տոկոսադրույքի սուբսիդավորումից զգուտը չափվել է որպես վարկի՝ սկզբնական հաշվեկշռային արժեքի և ատացված մուտքերի տարբերություն: Օգուտը հաշվառվել է որպես պետական շնորհ: Հետագայում շնորհը ճանաչվում է շահույթում կամ վնասում սարքավորումների մաշվածությանը զուգահեռ:

19 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	194,951	97,446
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	11,438	12,126
Այլ կրեդիտորական պարտքեր	11,169	4,612
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	217,558	114,184

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 32 օր: Առևտրային կրեդիտորական պարտքերն արտահայտված են հայկական դրամով և դրանց գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման ըստազականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

20 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են համադրվել հետևյալ կերպ.

	Լիզինգային պայմանագրեր	Այլ վարկեր և փոխառութ- յուններ	Թաժենտի- րական կաիտալ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	932,337	94,000	417,500	1,443,837
Դրամային հոսքերից				
Ստացված գումար	-	30,000	-	30,000
Մարումներ	(267,149)	-	-	(267,149)
Վճարված տոկոսներ	(63,621)	-	-	(63,621)
Այլ ծախսեր	(50,422)	-	-	(50,422)
Ոչ դրամային հոսքերից				
Ավելացում	904,495	-	562,183	1,466,678
Իրական արժեքի ճշգրտում	(134,043)	-	-	(134,043)
Հաշվեկշռված գործարքների ինքնարժեք	50,229	-	-	50,229
Տոկոսի հաշվեկշռում	156,173	-	-	156,173
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,527,999	124,000	979,683	2,631,682
Դրամային հոսքերից				
Ստացված գումար	-	-	801,938	801,938
Մարումներ	(535,763)	(124,000)	-	(659,673)
Վճարված տոկոսներ	(76,071)	-	-	(76,071)

Գ/Պ/Կ/Վ - ՑԸԸ:
Ֆինանսական հաշվետվությունների
31 դեկտեմբերի 2024թ.

25

Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական ՀՀ դրամով)

	Լիզինգային պայմանագրեր	Այլ վարկեր և փոխառութ- յուններ	Թաժենտի- րական կաիտալ	Ընդամենը
Ոչ դրամային հոսքերից				
Ավելացումներ	521,974	-	-	521,974
Իրական արժեքի ճշգրտում	(112,860)	-	-	(112,860)
Տոկոսի հաշվեկշռում	180,509	-	-	180,509
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,505,878	-	1,781,621	3,287,499

21 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմեր ներառում են հիմնական ղեկավար անձնակազմը, թաժենտերը և միևնույն վերահսկողության տակ գտնվող ընկերությունները:

21.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է հետևյալ թաժենտերի կողմից՝

	Թաժենտաս
Սարգիս Իսրայելյան	25%
Դավիթ Քոչարյան	25%
Խաչիկ Սահակյան	25%
Սամվել Մարգարյան	13%
Դավիթ Մարգարյան	12%

21.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ	2024թ.	2023թ.
Թաժենտեր		
Փոխառությունների տրամադրում	50,000	-
Ստացված փոխառությունների մարումներ	94,000	-
Միևնույն վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ապրանքների վաճառք	1,832,859	1,539,678
Փոխառություններից մուտքեր	-	30,000
Փոխառությունների տրամադրում	7,000	-
Ստացված փոխառությունների մարումներ	30,000	-
Ապրանքների և հումքի ձեռքբերում	177,816	37,300

Գ/Պ/Կ/Վ - ՑԸԸ:
Ֆինանսական հաշվետվությունների
31 դեկտեմբերի 2024թ.

25

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (սրտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

Գործարքներ	2024թ.	2023թ.
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Փոխստորգյույմ աշխատակիցներին	250	229
Մնացորդներ	2024թ.	2023թ.
Քաժներեր		
Ստացված փոխառություններ	-	94,000
Տրամադրված փոխառություններ	50,000	-
Տրված կանխավճարներ	8,155	8,155

Միևնույն վերահսկողության փակ գործվող ընկերություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	169,235	1,640
Տրամադրված փոխառություններ	-	30,000
Տրամադրված փոխառություններ	7,000	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	187,158	98,256

Ընկերության տնօրենը նաև քաժենմա ունի Ընկերությունում:

22 Պայմանականություններ

22.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնց լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

22.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հաշվարկներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (սրտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

23 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը և իրազեկիության ռիսկը:

Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

23.1 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառություններից և առևտրային դեբիտորական պարտքերը:

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Տրված փոխառություններ	57,000	20,175
Առևտրային դեբիտորական պարտքեր	451,916	148,086
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	157,622	45,911
	666,538	214,172

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների պարտքային ռիսկը կառավարվում է դրամական միջոցները տարբեր բարձր վարկանիշ ունեցող բանկերում պահելու միջոցով:

Փոխառությունների պարտքային ռիսկն Ընկերության համար ընդունելի, քանի որ դրանք տրամադրվել են կապակցված կողմերին:

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ:

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական քաղաքիչ: Անկախվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանց ունեն պարտքային ռիսկի ընդհանուր ընդդռմանը: Դրանք խմբակրվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ընկերությունը վերանայում է առևտրային դեբիտորական պարտքերի մնացորդների ժամկետային վերլուծությունը և հետևում է ժամկետանց մնացորդներին:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

31 դեկտեմբերի 2024թ		Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ավելացվող պարտքային կրորտները	
	Ավելավող պարտքային կրորտ	Համախառն հաշվեկշռային արժեք	
Արիչև 60	0.7%	367,362	2,580
61 – 90	5%	26,850	1,343
91 – 180	25%	71,233	17,808
181 – 360	75%	30,453	22,840
361 և ավելի	100%	588	588
		496,486	44,570

23.2 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հնկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հնկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հնկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջկած դրամական հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հնկերությունը ստիպված կլինել մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական հոսքերը:

2024թ.		Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Արիչև 12 ամիս			
Արիչև 6 ամիս	194,951	405,431	600,382
6 ամսից մինչև 1 տարի	-	416,813	416,813
1-5 տարի	-	893,715	893,715
	194,951	1,715,959	1,910,910

2023թ.		Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Արիչև 12 ամիս			
Արիչև 6 ամիս	97,446	273,818	371,264
6 ամսից մինչև 1 տարի	124,000	327,095	451,095
1-5 տարի	-	1,238,886	1,238,886
	221,446	1,839,799	2,061,245

Հիմնական հաշվետվություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

Հնկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Հնկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերից: Հնկերությունը մտադիր է սպասարկել իր ֆինանսական պարտավորությունները հետագա վաճառքներից:

24 Իրական արժեքի չափում

Հնկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս նրբը մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (ճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից ստացվող այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

34.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Անդրդրվագված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հնկերության ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խեղափո գնահատում:

Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները և տրամադրված փոխառությունները իրացվելի են կամ կարճաժամկետ են, ուստի ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Հնկերության ֆինանսական գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

25 Կապիտալի ռիսկի քաղաքականություններ և ընթացակարգեր

Հնկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարարել ակամուտ մատակարարի:

Հնկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից բաշխված ընկերության բաժնետերերի միջև, որը ներառում է թողարկված կապիտալը ու կուտակված շահույթը:

Դնկավարությունը գնահատում է Հնկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակալորումից (լիվերիջ): Հաշվի են առնվում Հնկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Հնկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Հնկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Հնկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը:

Հիմնական հաշվետվություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ձուր պարզը		
Փոխառություններ	1,505,878	1,651,999
Հանած՝ ստորադաս վարկ	-	(94,000)
Հանած՝ Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(157,622)	(45,911)
	1,348,256	1,512,088
Եջգրված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	1,769,533	970,683
Գումարած՝ ստորադաս վարկ	-	94,000
	1,769,533	1,064,683
Ձուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	0.76	1.42

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՀՄԿԱ» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2023թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրասենյակ ՓԲԸ
Երևանի Գրասենյակի կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«ՀՄԿԱ» ՓԲԸ-ի բաժնետերերին

Դարձիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀՄԿԱ» ՓԲԸ-ի (Հնկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապատասխան ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հնկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նախ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Դարձիքի հիմք

Մենք աուդիտի անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հնկերությունից համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԵՄՄԿ կանոնագիր) և էթիկայի համապատասխան պահանջներին, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան ինքը են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հնկերության՝ 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել այլ աուդիտորի կողմից:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խաղաղապետության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ասպնառվելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հնկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հնկերության գործունեության անընդհատության ներառյալության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հնկերությունը, ընդհատել իր գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հնկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր հպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խաղաղապետության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խաղաղապետության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խեղաթյուրումն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կապվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի որոշ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածաբանություն: Ի լրումն՝

- Որոշակիացում և գնահատում ենք խաղաղապետության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արժանաբերելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան ինքը են հանդիսանում մեր կարծիքի համար: Խաղաղապետության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խաղաղապետությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միառնամաղթ բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չբարձրանում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտի վերաբերյալ ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր

նախագծելու, այլ ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կապված հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կատարվածն օգտակարում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

28 հունիս 2024թ.



Հայրեն Աճեմյան, FCCA

Առաջադրանքի պատասխանատու

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

		2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Սաևոր.		
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	2,586,622	1,379,221
Ոչ նյութական ակտիվներ		2,459	573
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		29,284	2,089
		2,618,365	1,381,883
Ընթացիկ ակտիվներ			
Դաշարներ	5	47,060	53,107
Սուստրային և այլ դեբիտորական պարտքեր	6	375,796	233,415
Տրամադրված փոխառություններ	7	20,175	-
Մնացորդներ բանկերում		45,911	15,412
		488,942	301,934
Ընդամենն ակտիվներ		3,107,307	1,683,817

Ֆինանսական վիճակի մասին
հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Շանոք.	2023թ.	2022թ.
		դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մեփական կապիտալ և պարտավորություններ	8		
Գալիտալ և պահուստներ		979,683	417,500
Բաժնետիրական կապիտալ		(9,000)	(47,557)
Կուտակված վնաս		970,683	369,943
Ոչ բերացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	9	1,102,125	870,322
Ակտիվների վերաբերող շնորհներ	10	255,258	138,704
		1,357,383	1,009,026
Ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկերի և փոխառությունների ընթացիկ մաս	9	549,874	156,015
Պայմանագրային պարտավորություններ		100,717	139,829
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	114,184	9,004
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		14,466	-
		779,241	304,848
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		3,107,307	1,683,817

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. հունիսի 28-ին:

Խաչիկ Սահակյան
Տնօրեն



Արտակ Նահապետյան
Հաշվապահության բաժնի ղեկավար



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«ՀՄԿԱ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբերի 2023թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ
ֆինանսական արդյունքի մասին
հաշվետվություն

Հազար դրամ	Շանոք.	2023թ.	2022թ.
		դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից	12	2,042,149	35,201
Վաճառքի ինքնաթիվ	13	(1,783,027)	(33,271)
Համախառն շահույթ		259,122	1,930
Այլ եկամուտ	14	65,806	23,104
Իրացման ծախսեր	15	(17,747)	(7,106)
Վարչական ծախսեր	16	(52,981)	(12,831)
Այլ ծախսեր		(733)	(2,983)
Գործառնական գործունեությունից շահույթ		253,467	2,114
